

## Նախարանի փոխարեն

09 դեկտեմբեր, 2013

Ք. Երևան

«Եթե Վճռաբեկ դատարանը լիներ վստահելի, ապա Վարդան Պետրոսյանի վթարի, Ավետիք Բուդաղյանի սպանության, Հարսնաքարում Վահե Ավետյանի սպանության դեպքերում ամեն քաղաքացի չէր փորձի դառնալ դատավոր, փոխարենը կսպասեր Հայաստանի դատարանի արդար վճռին: Եթե Վճռաբեկ դատարանը արդար գործեր, ապա Երևանում տրասնպորտի գնի թանկացման, Կոմիտաս 5-ի խնդիրների, Փակ շուկայի ապօրինի շինարարության դադարեցման, Մարցի, Թռչկանի ու այլ վիճելի ՀԵԿ-երի կառուցումը դադարեցնելու, Տիգրան Առաքելյանի պաշտպանության, Լյուքս Ստեփանյանի և այլ գորակոչիկների սպանության բացահայտման, Թեղուտի բնապահպանական խնդրի լուծման համար մարդիկ արդարադատություն չէին փնտրի փողոցներում:

Եթե Վճռաբեկ դատարանի և նրա երկու պալատների նախագահներ Արման Մկրտումյանը, Դավիթ Ավետիսյանն ու Երվանդ Խունդկարյանը պատշաճ գործեին, ապա դատական անօրեն վճիռներով հազարավոր սովորական մարդկանցից չէին խլի տունը, փողը, աշխատավարձը, սեփական երեխային, բանտերում չէին հայտնվի անմեղ մարդիկ, իսկ հանցագործները չէին մնա ազատության մեջ: Վերջապես, եթե այդ երեք նախագահները արդարություն ապահովեին, ապա Հայաստանից չէին հեռանա օտարերկրյա տասնյակ ներդրողներ, ում թալանել են հենց դատարաններում, իսկ հայ գործարարները չէին համակերպվի մաքսակետերում ապօրինի ու երկակի ստանդարտներով կիրառվող հսկիչ գների, ինչպես նաև օլիգարխներ ստեղծելու և պահելու այլ եղանակների հետ:»

**Կարեն Անդրեասյան**

**Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների երրորդ պաշտպան**



ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի  
արտահերթ զեկույց  
արդար դատաքննության իրավունքի  
վերաբերյալ

Երևան 2013

## Զեկույցի մասին

Զեկույցի մշակման նպատակով հարցազրույցներ են անցկացվել շուրջ 120 ոլորտի մասնագետների հետ՝ փաստաբաններ, դատախազներ, դատավորներ, իրավաբան-գիտնականներ և այլ փորձագետներ: Պաշտպանի կողմից երաշխավորվել է հարցազրույցների ընթացքում ստացված տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը:

Զեկույցի ստեղծման համար ուսումնասիրվել են.

- ՀՀ արդարադատության խորհրդի 2006-2013թթ. ընդունված բոլոր որոշումները,
- 270 վճռաբեկ բողոքներ, որոնք վարույթ են ընդունվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից (2012-2013թթ.<sup>1</sup>),
- դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 500 դիմումների ընթացքը (2011-2013թթ.),
- 200 վճռաբեկ բողոքներ և դրանց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումներ (2007-2013թթ.),
- Փաստաբանների կողմից տրամադրված շուրջ 35 դատական գործեր:

Զեկույցի մշակման նպատակով Պաշտպանի նախաձեռնությամբ և Քառնթերփարթ Ինթերնեշնլ» Հայաստանյան ներկայացուցչության աջակցությամբ իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն՝ «Հայ Ժողովրդավարական ֆորում» Հասարակական կազմակերպության կողմից, որի արդյունքները նույնպես ներառված են զեկույցում:

Ուսումնասիրվել են նաև Սահմանադրական դատարանի որոշումները և տարեկան հաղորդումները, Վճռաբեկ դատարանի տարեկան հաշվետվությունները, դատական համակարգին առնչվող օրենսդրական նախագծերը, միջազգային կազմակերպությունների զեկույցները, փորձագիտական կազմակերպությունների կարծիքներն ու եզրակացությունները:

Զեկույցում օգտագործվել են նաև վիճակագրական տվյալներ, որոնք տրամադրվել են ՀՀ դատական դեպարտամենտի և Արդարադատության նախարարություն կողմից:

***Զեկույցը մշակող աշխատանքային խումբը ղեկավարել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տեղակալ Գենյա Պետրոսյանը:***

---

<sup>1</sup> «2013 թ.» հիշատակումները մեծամասամբ վերաբերում են մինչև սեպտեմբերի 30-ը առկա տեղեկատվությանը:

# Բովանդակություն

I.	Կոռուպցիոն մեխանիզմներ .....	5
II.	Դատավորների ճնշումներ.....	8
III.	Արձանագրված խախտումները և երկակի ստանդարտները Արդարադատության խորհրդում.....	13
IV.	Արձանագրված խախտումները և երկակի ստանդարտները Վճռաբեկ դատարանում.....	52
V.	Դատական համակարգի օրենսդրական խնդիրներ.....	75

## I. Կոռուպցիոն մեխանիզմներ

Մեր կողմից անցկացված հարցումների արդյունքում պարզվել են դատական համակարգում առկա հետևյալ կոռուպցիոն մեխանիզմները, շրջանառվող գումարի չափերը և տրաման ձևերը:

Տարբերակ 1. Կաշառքը տրվում է առաջին ատյանի դատավորին, որը պատասխանատվություն է ստանձնում միայն իր կողմից կայացված վճռի համար: Այս դեպքում հաջորդ յուրաքանչյուր ատյանում «կաշառատուն» ինքն է պարտավոր «համաձայնեցնել» գործի ելքը՝ նոր գործարք կնքելով այդ ատյանի դատավորի կամ դատավորների հետ:

Տարբերակ 2. Դատավորը ավելի մեծ գումար է պահանջում իր վճիռը «պահելու» համար, այսինքն՝ երաշխավորում է, որ իր կողմից կայացված վճիռը չի բեկանվի վերադաս դատական ատյաններում: Այս տարբերակը ենթադրում է գումարի բաշխում վերադաս դատական ատյանների դատավորների միջև:

### Դատական կաշառքի սակագներ.

*Կաշառքի չափը որոշվում է հայցագնի 10 տոկոսից էլնելով: Ընդհանուր առմամբ հարցվածների մեծ մասի պնդմամբ կաշառքի սակագները տատնվում են հետևյալ միջակայքերում.*

- *առաջին ատյանում* 500-10.000 ԱՄՆ դոլար,
- *վերաքննիչ դատարանում* 2.000-15.000 ԱՄՆ դոլար,
- *Վճռաբեկ դատարանում* 10.000-50.000 ԱՄՆ դոլար:

Տարբերակ 3. Գործին մասնակցող անձը միանգամից կապի մեջ է մտնում Վճռաբեկ դատարանի որևէ անդամի հետ: Այս դեպքում գործն ի սկզբանե վերահսկվում և հրանգավորվում է անմիջապես Վճռաբեկ դատարանի անդամի կողմից:

Տարբերակ 4. Երկու դատական ատյաններում հաջողության չհասած կողմը վճռաբեկ դատարանի հետ համաձայնության գալով, հասնում է դատական ակտի բեկանմանը և փոփոխմանը: Այսինքն՝ գումար չի վճարում առաջին

ատյանում, վերաքննիչ ատյանում և իր խնդիրը «կարգավորում» է միայն Վճռաբեկ դատարանում:

Որոշ հարցվածների պնդմամբ՝ Վճռաբեկ դատարանի առանձին դատավորներ կամ նրանց հետ «փայտեր» ստորադաս ատյանի դատավորներ ունեն իրենց հետ ոչ պաշտոնական ձևով փոխկապակցված փաստաբանական գրասենյակները, որոնց միջոցով իրականացվում են համապատասխան գործարքները:

Այսուհանդերձ, հարցվածների մեծ մասի կարծիքով կաշառքի գումարի չափը որոշելու համար չկան միասնական չափանիշներ, յուրաքանչյուր դեպքում գումարը որոշվում է անհատական մոտեցմամբ:

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

### Հին Կտակարան. Թագավորություններ Ա, գլուխ 8:

<sup>1</sup> Երբ Սամուէլը ծերացաւ, իր որդիներին Իսրայէլի դատաւորներ կարգեց:

<sup>4</sup> Նրա որդիները, սակայն, չգնացին իրենց հօր ճանապարհով, այլ, ընչաքաղցութեան յետեւից ընկնելով՝ կաշառք էին վերցնում եւ իրաւունքը թիւրում:

<sup>5</sup> Բոլոր իսրայէլացի տղամարդիկ հաւաքուեցին, եկան Սամուէլի մօտ՝ Արիմաթեւ, եւ ասացին նրան.

<sup>6</sup> «Դու, ահա, ծերացել ես, իսկ քո որդիները քո ճանապարհով չեն գնում: Արդ, մեզ վրայ մի թագաւոր դի՛ր, որ մեզ դատաւորութիւն անի, ինչպէս բոլոր ազգերի մօտ է»:

<sup>21</sup> Մենք եւս այլ ազգերի նման լինենք, թող մեր թագաւորը մեզ դատի, մեր առջեւից ընթանայ եւ մեզ պատերազմի առաջնորդի»:

<sup>22</sup> Սամուէլը լսեց ժողովրդի բոլոր ասածները եւ դրանք յայտնեց Տիրոջը:

<sup>23</sup> Տէրն ասաց Սամուէլին. «Լսի՛ր նրանց եւ նրանց վրայ թագաւոր դի՛ր»:

«Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013» հարցման արդյունքներով Հայաստանում անցկացված հարցման մասնակիցների 69%-ը համարել է, որ դատական համակարգը կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված է, իսկ հարցվածների 18%-ը հայտարարել է դատարաններին կաշառք տալու փաստի մասին: Հայաստանում անցկացված հարցման մասնակիցների 4-ից գրեթե 3-ը դատական համակարգը համարում են կոռումպացված կամ ծայրահեղ կոռումպացված: Ըստ հետազոտության՝ Հայաստանը միակ

երկիրն է, որտեղ հարցվածների կեսից ավելին նշել է, որ պատրաստ չէ դիմելու որևէ գործողությունների՝ կոռուպցիայի դեպ պայքար մղելու ուղղությամբ: Որպես կոռուպցիայի դեպքերի մասին չբարձրաձայնելու հիմնական պատճառ՝ նշվել է այն, որ բարձրաձայնելու արդյունքում որևէ փոփոխություն տեղի չի ունենա, քանի որ առկա է անվստահություն գործող օրենքների և դրանց կիրառման նկատմամբ:<sup>2</sup>

2012թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեին մտահոգել են դատական համակարգում մշտական բնույթ կրող կոռուպցիայի վերաբերյալ պնդումներն ու բարձր մակարդակով կոռուպցիայի դեմ պայքարի համոզիչ արդյունքների բացակայությունը, որը հանգեցրել է արդարադատության նկատմամբ հանրային վստահության անկմանը:<sup>3</sup>

---

<sup>2</sup> Թրանսփարենսի Ինթերնեշնլ միջազգային հակակոռուպցիոն շարժում, «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013» հարցման արդյունքներ:

<sup>3</sup> Տե՛ս 2012թ. հուլիսի 27-ին հաստատված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի եզրափակիչ հետևություններ՝ Հայաստանի կողմից ներկայացված պարբերական զեկույցի վերաբերյալ:

## II. Դատավորների ճնշումներ

Մեր բազմաթիվ հարցումները վկայում են, որ Վճռաբեկ դատարանում ներկայումս ձևավորված է դատավորներին ճնշելու, նրանց ենթարկեցնելու մի հանցավոր, բայց շատ գործուն համակարգ: Ձևավորված է, այսպես կոչված, Վճռաբեկ դատարանի «զոնալ դատավորների» ինստիտուտը: Ըստ այդ համակարգի Վճռաբեկ դատարանի առանձին դատավորներ ունեն իրենց կցված և իրենց վերահսկողությանը ենթակա դատավորներ, որոնք իրենց հետ պետք է համաձայնեցնեն համապատասխան դատական գործերը: Ստորադաս դատարանի դատավորը իր գործի մասին Վճռաբեկ դատարանի «զոնալ դատավորին» տեղեկացնում է անձնական հանդիպումների, հեռախոսազանգերի կամ ոչ պաշտոնական «տեղեկանքներ»-ի<sup>4</sup> ներկայացման միջոցով:

Բացի զոնալ դատավորի ինստիտուտից Վճռաբեկ դատարանում ներքին հանցավոր «հրովարտակով» հաստատված են այն գործերի տեսակները, որոնցով, մինչև որևէ վճիռ կայացվելը, Վճռաբեկ դատարանի «զոնալ դատավորի» հետ պարտադիր պետք է համաձայնեցվեն: Մեր հարցման ժամանակահատվածում նման գործերի շարքին էին դասված.

- հանրային հնչեղություն ունեցող գործերը,
- զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերը (քանի որ դրանք էլ են հնչեղ և, բացի այդ, լրատվական դաշտին պետք չէ անտեղի վրդովեցնել),
- քրեական գործերով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու, սահմանված նվազագույն պատժից ցածր պատիժ նշանակելու, մեղադրական եզրակացությունից շեղվող դատավճիռ կայացնելու դեպքերը,

---

<sup>4</sup> Օրինակ, գործի նյութերին ծանոթանալիս, փաստաբան Ն. Բաղդասարյանը հայտնաբերել է «ՏԵՂԵԿԱՆՔ» վերտառությամբ փաստաթուղթ, որտեղ կետ առ կետ շարադրված են եղել դեռևս դատաքննությունը չսկսված գործով կայացվելիք վճռի հիմնավորումները, որոնք հետագայում դրվել են կայացված դատական ակտի հիմքում:



- խոշոր կազմակերպությունների մասնակցությամբ գործերը (նման գործերով կարելի է մեծ կաշառքներ վերցնել, այդ պատճառով Վճռաբեկի «զոնալ դատավորը» ցանկանում է գործում ի սկզբանե ներգրավվել):

**Օմբուդսմենին՝ դատավորի գաղտնի տեղեկացումից.**

*«Ինձ մեղադրեցին այն բանում, որ ես համարձակվել եմ «առանց նախապես համաձայնեցնելու և թույլտվություն ստանալու» քննել և որոշում կայացնել միջազգային հնչեղություն ունեցող մի գործի վերաբերյալ: Իմ նկատմամբ կիրառվեցին ճնշումներ, որոնք ազդակ էին նաև իմ գործընկեր դատավորներին, թե ինչ հաշվեհարդար կսպասվի յուրաքանչյուրին, ով կհամարձակվի շեղվել գոյություն ունեցող «կանոններից»՝ չկատարելով տրված ցուցումները»:*

Բազմաթիվ փաստաբաններ մեզ հայտնել են, որ Վճռաբեկ դատարանում հաճախ տեսնում են դատավորներին՝ դատական գործերի հատորներով՝ համապատասխան «Վճռաբեկի զոնալ դատավորի» հետ հանդիպմանը սպասելիս: Մի շարք դեպքերում առաջին ատյանի դատարանի դատական ակտերը գրվում են Վճռաբեկ դատարանում և փոխանցվում դատավորին:

**Օմբուդսմենին՝ դատավորի գաղտնի տեղեկացումից.**

*«Վճռաբեկ դատարանի դատավորի կողմից ինձ տրվեց կրիչի վրա ձայնագրված տվյալ գործով կայացվելիք դատական ակտի տեքստը և հրահանգվեց այն ներկայացնել որպես իմ սեփական որոշում»:*

Դատական գործի համաձայնեցումը Վճռաբեկ դատարանի հետ հաճախ կատարվում է ոչ միայն վերջնական դատական ակտի կայացման փուլում, այլև դատական գործի քննության ողջ ընթացքում: Փաստաբանները նկատել են, որ հենց դատական նիստի ընթացքում դատավորը որոշակի պահին ընդմիջում է հայտարարում և, ամենայն հավանականությամբ, կապ է հաստատում Վճռաբեկ դատարանի «զոնալ դատավորի» հետ և քննարկում գործի մանրամասները:

**Օմբուդսմենին՝ դատավորի գաղտնի տեղեկացումից.**

*«Ստացված ցուցումների համաձայն՝ դատական նիստի ընթացքում ես հարկադրված էի պարբերաբար ընդմիջումներ հայտարարել՝ Վճռաբեկ դատարանի դատավորին գործի ընթացքի մասին զեկուցելու համար»:*

Մեր հարցման արդյունքներից ելնելով դատավորներին պայմանականորեն կարելի է բաժանել երեք կատեգորիաների.

1. դատավորներ, որոնք գրեթե ցանկացած գործ համաձայնեցնում են Վճռաբեկ դատարանի հետ. այս դատավորները «ամենաչիքված» դատավորներն են համարվում, որոնք արժանանում են խրախուսանքների,
2. դատավորներ, որոնք համաձայնեցնում են միայն պարտադիր համաձայնեցման ենթակա գործերը,
3. և վերջապես, կա սակավաթիվ դատավորների մի դաս, որն ընդհանրապես որևէ գործ չի համաձայնեցնում Վճռաբեկ դատարանի հետ՝ կայացնելով ինքնուրույն որոշումներ: Այս դատավորները անկախ են և համարվում են «ամենաչիքված» և «անկանխատեսելի» դատավորները, ուստի՝ ենթակա են ճնշումների ու «հետապնդումների» ենթարկվելու մեծ ռիսկի:

Դատավորների նկատմամբ ճնշումները որոշակի դրսևորումներ են ստանում նաև ՀՀ վճռաբեկ դատարանի ներսում: Պալատի դատավորների նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով Վճռաբեկ

դատարանի որևէ պալատի նախագահ կարող է որոշումը ստորագրել առաջինը, այնուհետև այն փոխանցել վճռաբեկ դատարանի պալատի մյուս դատավորներին՝ նման ձևով կաշկանդելով նրանց հակառակ դիրքորոշում արտահայտելու հարցում: Ընդհանուր ճնշվածության և ազդեցության կոնկրետ լծակների առկայության պարագայում Վճռաբեկ դատարանի անդամները հիմնականում խուսափում են դիմադրել պալատի նախագահին և ենթարկվում են նրա կամքին:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ փաստաբանների և դատավորների շրջանում մեր կողմից արված հարցումները վկայում են այն մասին, որ Վճռաբեկ դատարանի կողմից իրականացվող ճնշումները մեծ դժգոհություն և ներքին ընդվզում են առաջացնում դատավորներից շատերի մոտ:

### **ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն**

*Դատական իշխանության անաչառությունն ու անկախությունը հանդիսանում են ազգային անվտանգության ռազմավարության իրագործման հիմնական երաշխիքներից մեկը, իսկ դատաիրավական համակարգի նկատմամբ վստահության պակասը՝ ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիք:*

Այսպիսով, դատական ակտերի լայնածավալ անօրինական և հանցավոր համաձայնեցում է կատարվում Վճռաբեկ դատարանի և ստորադաս դատավորների միջև, ինչով էլ պայմանավորված է դատական ակտերի կայունության բարձր ցուցանիշը:

Դատավորների նկատմամբ առկա ճնշումները և դրանք իրականացնելու համար կիրառվող ռեպրեսիոն մեխանիզմները հանգեցրել են մի իրավիճակի, երբ հաճախ ստորադաս ատյանի դատավորները վերածվում են տեխնիկական աշխատանք իրականացնող կամակատարների: Ինչպես նշել էր հարցված փաստաբաններից մեկը. «Վճռաբեկ դատարանի ցուցումներին

չենթարկվելու դեպքում այլ ատյանների դատարանների դատավորները պատժվում են»:

Արդարադատության խորհուրդը հանդիսանում է այն լծակը, որի միջոցով Վճռաբեկ դատարանը իրականացնում է ուղղակի և անուղղակի ճնշումներ դատավորների նկատմամբ: Ջեկույցում՝ ստորև, ներկայացված է Արդարադատության խորհրդի կողմից կամայական և երկակի ստանդարտներով իրականացվող պատժի մեխանիզմների կիրառման ողջ վերլուծությունը:

2012թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն արձանագրել է Հայաստանում դատարանների անկախության պակասը, որը պայմանավորել է քաղաքական ճնշումների վտանգ պարունակող՝ դատավորների նշանակման մեխանիզմով և կարգապահական պատասխանատվության անկախ մեխանիզմի բացակայությամբ<sup>5</sup>:

**Հայաստանում Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործման վերաբերյալ 2012թ. առաջընթացի զեկույց, Բրյուսել, 2013թ.**

*Չնայած իրականացվող բարեփոխումներին, հանրային վստահությունը դատական համակարգի նկատմամբ շարունակում է մնալ ցածր մակարդակում:*

<sup>5</sup> Տե՛ս 2012թ. հուլիսի 27-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից հաստատված եզրափակիչ հետևություններ՝ Հայաստանի կողմից ներկայացված պարբերական զեկույցի վերաբերյալ:

### III. Արձանագրված խախտումները և երկակի ստանդարտները Արդարադատության խորհրդում

Արդարադատության խորհուրդը, ըստ էության այն մարմինն է, որ նշանակում կամ ազատում է դատավորներին, խրախուսում կամ պատասխանատվության է ենթարկում նրանց, իջեցնում կամ բարձրացնում է դատավորների պաշտոնը: Արդարադատության խորհուրդը կազմված է 13 անդամներից, որից 9-ը դատավորներ են, իսկ 4-ը՝ իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում է Վճռաբեկ դատարանի նախագահը:

Արդարադատության խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմը ներկայումս «ամենարդյունավետ» լծակն է դատավորներին կախյալ և ճնշված վիճակում պահելու համար: Այս մասին են վկայում փաստաբանների, դատախազների և դատավորների շրջանում իրականացված մեր հարցումները, ինչպես նաև Ամերիկյան իրավաբանների ընկերակցության «Երավունքի գերակայության նախաձեռնության» կողմից իրականացված ուսումնասիրությունը ըստ որի Արդարադատության խորհրդի կողմից դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը կիրառվում է կամայականորեն՝ դատական ակտերի կայացման գործընթացի վրա ազդելու կամ առանձին դատավորների նկատմամբ հաշվեհարդարի իրականացման նպատակով<sup>6</sup>:

ՀՀ արդարադատության խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով դատավորներին ճնշելու ողջ համակարգը գործում է երկակի ստանդարտների կիրառմամբ: Այսինքն «վերադաս դատավորներին» ենթարկվող դատավորը իր խախտման համար, հիմնականում, չի ենթարկվում պատասխանատվության, իսկ չենթարկվող դատավորը, միևնույն խախտման համար կամ նույնիսկ առանց որևէ խախտման, ենթարկվում է ավելի խիստ պատասխանատվության:

---

<sup>6</sup> Դատական բարեփոխումների ինդեքսը ՀՀ-ի համար, 2012թ., Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն, գեկույցի մշակման նպատակով փաստաբանների և դատավորների շրջանում իրականացված հարցումների արդյունքները:

«Վերադաս դատավորների» կողմից դատավորներին ճնշելու երևույթի մասին անուղղակիորեն վկայում է նաև զեկույցում վերլուծված վիճակագրական տվյալները, որոնք ցույց են տալիս, որ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացում ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահն ունի գերակշիռ մասնակցություն: Մի շարք դեպքերում կարգապահական վարույթը հարուցվում է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից Վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը ստանալու նույն օրը կամ հաջորդ օրը, ինչը վկայում է այն մասին, որ կարգապահական վարույթի հարուցումն ու դրա արդյունքները համապատասխան դեպքերում կանխորոշված են:

Կայացված դատական ակտերի համար իրենց լիազորությունների դադարեցման համատեքստում դատավորների խոցելիությունը, համադրված դատավորի համար որևէ արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայությամբ, դատական համակարգի վրա թողել է էական սառեցնող ազդեցություն (ԱՄՆ պետքարտուղարություն, Մարդու իրավունքների զեկույց 2012թ., Հայաստան):

2010-2013թթ. ընթացքում ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցված 50 կարգապահական վարույթներից 32-ի դեպքում վարույթի հարուցման առիթ է հանդիսացել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը կամ որոշումը, 8-ի դեպքում՝ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությունը, 10-ի դեպքում՝ փաստաբանի, քաղաքացու դիմումները կամ այլ առիթները: 2010թ. Արդարադատության խորհուրդն ընդհանուր առմամբ ստացել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու 208 դիմում<sup>7</sup>, 2011թ.՝ 220<sup>8</sup>, 2012թ.՝ 346<sup>9</sup>, իսկ 2013թ.՝ 434 դիմումներ<sup>10</sup>:

<sup>7</sup> Դատական բարեփոխումների ինդեքսը ՀՀ-ի համար, 2012թ., Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն:

<sup>8</sup> Դատական բարեփոխումների ինդեքսը ՀՀ-ի համար, 2012թ., Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն:

<sup>9</sup> ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված վիճակագրական տվյալներ:

<sup>10</sup> 2013թ. նոյեմբերի 27-ի դրությամբ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված վիճակագրական տվյալներ:

Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճիռների կայացման արդյունքում արձանագրվել է ընդամենը մեկ դեպք, երբ դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, մինչդեռ 2002-2012թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացվել 1832 գանգատ, որից 847-ը համարվել են անընդունելի կամ հանվել են գործերի ցուցակից: 2013թ. հոկտեմբերի դրությամբ Եվրոպական դատարանը, ըստ էության, վճիռ է կայացրել Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված 45 գործով, որից 43-ով Եվրոպական դատարանի կողմից արձանագրվել է խախտում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներով 2013թ. հոկտեմբերի դրությամբ դիմումատուների կողմից ներկայացված բողոքներով բավարարվել է 570 հազար 294 եվրո փոխհատուցման պահանջ:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացը նախնառաջ սկսվում է կարգապահական վարույթ հարուցելու փուլից: Մյուսը՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու, այսինքն՝ դատավորի նկատմամբ կարգապահական տույժերի կիրառման փուլն է, երբ որոշվում է, թե արդյոք դատավորը թույլ է տվել խախտում և եթե թույլ է տվել, ինչ տույժի պետք է ենթարկվի:

Համապատասխան խմբավորմամբ ստորև ներկայացնում ենք Արդարադատության խորհրդի կողմից օրենքի բացահայտ խախտումների, երկակի ստանդարտների և կամայականությունների բազմաթիվ դրսևորումներ:

1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հարցը ՀՀ դատական օրենսգրքով պայմանավորված չէ գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու կամ վերադաս դատական աստիճանում գործի՝ քննության փուլում չգտնվելու հանգամանքներով:<sup>11</sup> Այս ակնհայտ փաստը մեզ ուղղված պաշտոնական գրությամբ հաստատել է նաև ՀՀ դատական

<sup>11</sup> ՀՀ դատական օրենսգրքի, հոդված 153, մաս 2, կետեր 1-ին և 2-րդ:

դեպարտամենտը, ընդունելով, որ օրենսդիրը դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու ժամկետ դիտում է հողվածում նշված մեկ տարին՝ հաշված տվյալ դատական ակտի կայացման պահից:<sup>12</sup> Այնուամենայնիվ, մենք արձանագրել ենք մի շարք դեպքեր, երբ, գործը վերադաս դատական ատյանում քննության փուլում գտնվելու պատճառաբանությամբ, կարգապահական հանձնաժողովի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

Այսպես, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա ս.թ. հուլիսին Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը հրաժարվել է վարույթ հարուցել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Բունիայանի նկատմամբ՝ քաղաքացիական գործը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում քննության փուլում գտնվելու և դատավորի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության արգելքի հղումով:

Նույն պատճառաբանությամբ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը վարույթ չի հարուցել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի նկատմամբ՝ 16.08.2012թ. «Հայփոստ» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

Թիվ ԵԿԴ/3012/02/11 և ԵԿԴ/0019/04/12 քաղաքացիական գործերը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում քննության փուլում գտնվելու պատճառաբանությամբ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել նաև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Մուրջյանի նկատմամբ՝ «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

Մի շարք դեպքերում, որպես առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու

---

<sup>12</sup> ՀՀ դատական օրենսգրքի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել դատավորի կողմից տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարի ժամկետում:



պատճառաբանություն, վկայակոչվել է գործը՝ ՀՀ վճռաբեկ դատարանում գտնվելու հանգամանքը:

Մինչդեռ, ՀՀ դատական օրենսգիրքը նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկման հնարավորությունը պայմանավորում է միայն տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացված լինելու հանգամանքով<sup>13</sup>:

2. Դրա հետ միասին մենք արձանագրել ենք նաև տրամագծորեն հակառակ պրակտիկա, երբ առանձին գործերով ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել են կարգապահական վարույթներ կամ Խորհրդի կողմից կայացվել են որոշումներ, երբ համապատասխան գործը գտնվել է քննության փուլում վերաքննիչ դատարանում կամ դեռևս նույն դատավորի վարույթում: Ավելին, այդ գործերի մի մասով Արդարադատության խորհրդի կողմից խախտվել են ՀՀ դատական օրենսգրքի պահանջները, քանի որ դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, այն դեպքում, երբ գործն ըստ էության լուծող դատական ակտ դեռևս կայացված չի եղել:

Այսպես, Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի **26.03.2010թ.** թիվ N-Կ-2-06/2010 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Ղազարյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ Արդարադատության խորհրդի 10.04.2010թ. թիվ ԱԽ-6-Ո-05 որոշմամբ դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Կարգապահական վարույթը հարուցվել և դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության քաղաքացիական գործը դեռևս իր վարույթում գտնվելու փուլում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացված չլինելու պայմաններում: Ավելին, կարգապահական վարույթի հարուցումը ուղղակի ազդեցություն է ունեցել գործի քննության վրա, քանի որ դատարանն իր **30.03.2010թ.** որոշմամբ վերացրել է խնդրահարույց որոշումը:

---

<sup>13</sup> Պաշտպանի կարծիքին ներկայացված՝ ՀՀ դատական օրենսգրքի փոփոխությունների նախագծի համաձայն՝ նյութական կամ դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը պայմանավորված է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքով:

Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի 15.06.2012թ. թիվ N-Կ-2-1 որոշմամբ՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ա. Մերանգուլյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ նույն թվականի հուլիսի 24-ին դատավորը Արդարադատության խորհրդի թիվ ԱԽ-14-Ո-18 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, երբ քաղաքացիական գործը դեռևս գտնվում էր իր վարույթում (կասեցված վիճակում)՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացված չլինելու պայմաններում:

Միջանկյալ դատական ակտի կայացման համար դատավոր Ա. Մերանգուլյանի նկատմամբ վարույթ հարուցելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հանգամանքներն ընթացիկ գործի քննության վրա ունեցել են ուղղակի ազդեցություն՝ հանգեցնելով դատավորի կողմից թիվ ԵԷԴ/0970/02/11 քաղաքացիական գործով ինքնաբացարկ հայտնելու որոշմանը: Գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացվել է միայն 28.02.2013թ.՝ այլ դատավորի կողմից:

Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի 19.02.2010թ. թիվ N-Կ-2-03/2010 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել ՀՀ վարչական դատարանի դատավոր Ք. Մկոյանի նկատմամբ, երբ իր վարույթում գտնվող վարչական գործով կայացված՝ գործի վարույթը կասեցնելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը գտնվում էր վարչական դատարանում քննության փուլում<sup>14</sup>: ՀՀ վարչական դատարանի կողմից 22.02.2010թ. կայացվել է որոշում՝ բողոքը բավարարելու մասին, և գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացվել է:

ՀՀ արդարադատության նախարարի կողմից դատավոր Յ. Իսկոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի հիման վրա ՀՀ արդարադատության խորհուրդը 03.05.2013թ. թիվ ԱԽ-14-Ո-22 որոշմամբ ենթարկել է դատավորին կարգապահական պատասխանատվության, երբ քրեական գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում դեռևս գտնվել է քննության փուլում:

---

<sup>14</sup> Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացող խախտումներից մեկի հիման վրա:

Բոլոր նշված գործերով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են հանդիսացել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումները:

**3. Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից խախտվում են ՀՀ օրենսդրության և Սահմանադրական դատարանի որոշման պահանջները և որևէ կերպ չի պատճառաբանվում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման մերժումը, ինչն առավել կամայական բնույթ է հաղորդում հանձնաժողովի գործունեությանը:**

Մեր կողմից ուսումնասիրվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ 2011, 2012 և 2013թթ.<sup>15</sup> ընթացքում ՀՀ արդարադատության խորհրդին ուղղված բոլոր դիմումներին տրված ընթացքը: Տվյալ ժամանակահատվածում Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման մերժումն ըստ էության պատճառաբանելու դեպքեր չեն արձանագրվել<sup>16</sup>: Խախտման վերաբերյալ տրված պատասխանները կրել են տիպային բնույթ՝ ներառելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բավարար չլինելու վերաբերյալ ձևակերպումը:

18.12.2012թ. կայացված թիվ ՄԴՈ-1063 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ուղղակիորեն սահմանվեց ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից անձի դիմումի հիման վրա վարույթ չհարուցելու պատճառները հիմնավորելու պարտականությունը<sup>17</sup>: Դատարանն արձանագրեց, որ սահմանադրորեն ամրագրված «պատշաճ պատասխան» եզրույթը ենթադրում է ոչ միայն պատասխանի ձևը կամ առկայությունն ընդհանրապես, այլև ներառում է պատասխանի իրավաչափ և անհրաժեշտ հիմնավորումների պահանջը, ինչն

<sup>15</sup> 2013թ. հոկտեմբերի դրությամբ:

<sup>16</sup> Միայն մի դեպքում մի քանի նախադասությամբ գրությամբ անդրադարձ է կատարվել դիմումով ներկայացված խախտումներից մեկին:

<sup>17</sup> ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ այդ որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, որի համաձայն՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները:

իրավական պետությունում չի կարող շրջանցել նաև Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը:

Այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումից հետո ձևավորված իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը հաստատում է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից Սահմանադրական դատարանի որոշման պահանջների խախտման փաստը:

ՀՀ սահմանադրական դատարանի 18.12.2012թ. թիվ ՍԴՈ-1063 որոշման կայացումից հետո Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը, գտնելով, որ դատավորի կողմից թույլ չի տրվել օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, դիմումատուին ուղարկում է պատասխան հետևյալ բովանդակությամբ. «Տեղեկացվում է, որ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված դիմումը, գտել է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը բավարար չեն՝ ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսացող օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում չարձանագրելու պատճառաբանությամբ<sup>18</sup>»:

Վերոգրյալ բովանդակությամբ պատասխանը, ըստ ՀՀ դատական դեպարտամենտի, Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը դիտում է որպես պատճառաբանված և թիվ ՍԴՈ-1063 որոշման պահանջներից բխող պատասխան:

Մենք վստահ ենք, որ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի վերոգրյալ դիրքորոշումն անուղղակիորեն վկայում է հենց կարգապահական հանձնաժողովի կողմից հիմնավորված պատճառաբանություն չներկայացնելու փաստն ընդունելու հանգամանքի մասին: Մեջբերված պատասխանը ներկայացվում է որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու բոլոր դիմումների ներկայից տիպային պատասխան, ինչն ինքնին բացառում է որևէ անհատական դեպքով հիմնավորված պատճառաբանության առկայությունը:

---

<sup>18</sup> Թիվ ԴԴ1 Ե-2404 գրություն, 03.06.2013թ.:

Այսպիսով, արձանագրում ենք, որ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից խախտվել և շարունակվում են խախտվել ՀՀ սահմանադրության 27.1 հոդվածի, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգրքի պահանջները, իսկ 18.12.2012թ. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-1063 որոշման ընդունումից հետո՝ նաև հիշյալ որոշման պահանջները, դրանով իսկ առավել խորացնելով ու ավելի հիմնավոր դարձնելով հանրության մոտ ձևավորված կարծիքն Արդարադատության խորհրդի կողմից երկակի ստանդարտների կիրառման վերաբերյալ:

**4. Վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվում այնպիսի խախտումների դեպքերում, որոնց համար վարույթ է հարուցվում ստորադաս ատյանի դատարանի դատավորների նկատմամբ:**

1. "Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից վճռի կայացման արդյունքում՝ առաջին ատյանի դատարանի դատավորը ՀՀ արդարադատության խորհրդի կողմից ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, մինչդեռ, նույն գործով Քրեական վերաքննիչ դատարանի դատավորների նկատմամբ Արդարադատության նախարարի կողմից հարուցված կարգապահական վարույթը՝ Խորհրդի կողմից կարճվել է: Իսկ Վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ նույնիսկ չի նախաձեռնվել կարգապահական վարույթ հարուցելու որևէ գործընթաց:

Մինչդեռ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.06.2007թ. վճռի 58-րդ և 59-րդ կետերով ուղղակիորեն հաստատվել է կոնվենցիայի խախտում թույլ տալու փաստը ոչ միայն առաջին ատյանի, այլև բոլոր երեք ատյանների դատարանների կողմից, իսկ Կառավարության հակառակ պնդումները համարվել են չհիմնավորված՝ ներպետական դատարանների վճիռների եզրահանգումներից ելնելով:"

2. ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ արձանագրվել է, որ երկու քաղաքացիական գործերով Վճռաբեկ դատարանի կողմից կիրառվել է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ուժը կորցրած ճանաչված նորմը: Այնուամենայնիվ, այս խախտումները հիմք չեն հանդիսացել Վճռաբեկ

դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար: Մինդեռ, նույնաբովանդակ հիմքով առաջին աստիճանի դատավորների նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ (2010թ. ապրիլի 22-ի ԱԽ-6-Ո-06, ԱԽ-6-Ո-07 որոշումներ):

**5. Դատավորի կողմից կասկածները փարատելու պատճառաբանությամբ ինքնաբացարկի միջնորդության բավարարման երկու նույնաբովանդակ դեպքերով Արդարադատության խորհրդի կողմից տրվել են երկու բացահայտ իրարարմերժ լուծումներ:**

**Ա դեպք. Դատավորի կողմից թույլ տրված խախտումը գնահատվել է որպես դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և հանգեցրել կարգապահական պատասխանատվության:**

1. ՀՀ արդարադատության խորհրդի 28.02.2013թ. թիվ ԱԽ-7-Ո-14 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Հունանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության թվով 6 քաղաքացիական գործերով ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունները՝ եղած կասկածները փարատելու պատճառաբանությամբ բավարարելու հիմքով: Խորհուրդը գտել է, որ դատավոր Ա. Հունանյանը, խախտելով ինքնաբացարկ հայտնելու իրավական պահանջները, թույլ է տվել դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, վարքագծի կանոնների կոպիտ խախտում, որոնք ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի ուժով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք են հանդիսանում: Դատավոր Ա. Հունանյանին հայտարարվել է նախազգուշացում:

2. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդության հիման վրա՝ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի 30.01.2013թ. թիվ N-Կ-2-2/2013թ. որոշմամբ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ա. Մերանգույանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ կողմի չհիմնավորված կասկածները փարատելու պատճառաբանությամբ ինքնաբացարկի որոշում կայացնելու համար: Կարգապահական հանձնաժողովը փաստել է, որ դատավոր Ա. Մերանգույանի կողմից կայացված ինքնաբացարկի որոշումը կայացվել է ոչ թե համապատասխան իրավադրույթներով նախատեսված՝ ինքնաբացարկի

հիմք հանդիսացող որևէ հանգամանքի առկայության պարագայում, այլ կողմի չհիմնավորված կասկածները փարատելու պատճառաբանությամբ: Այսինքն, որոշման հիմքում դրվել է օրենքով դատավորին ինքնաբացարկ հայտնելու համար հիմք չհանդիսացող հանգամանք, ինչի արդյունքում դատավորի կողմից ոչ միայն չեն պահպանվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինքնաբացարկ հայտնելու իրավական պահանջները, այլև դատավորը, փաստորեն, հրաժարվել է քաղաքացիական գործով արդարադատություն իրականացնելուց<sup>19</sup>:

**Բ դեպք. Սույն գործով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել:**

2013թ. Մայիսի 23-ին փաստաբան Հ. Հարությունյանի կողմից դիմում է ներկայացվել Արդարադատության խորհուրդ՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներ Դ. Խաչատրյանին, Ն. Տավարացյանին և Ս. Միքայելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ<sup>20</sup>: Դիմումի ներկայացման համար հիմք է հանդիսացել մեկ վարույթում միացված թիվ ԵԿԴ 1304/02/11 և ԵԿԴ/1521/02/11 քաղաքացիական գործերով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կազմի բոլոր երեք դատավորների կողմից ինքնաբացարկ հայտնելու մասին որոշումների ընդունումը: Ինքնաբացարկ հայտնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշումները պատճառաբանվել են հետևյալով. *«...Հայտնում եմ, որ ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված ինքնաբացարկ հայտնելու որևէ հիմք չունեմ և միջնորդության մեջ նշված պատճառաբանությունները համարում եմ անհիմն, քանի որ միջնորդությունը ներկայացրած կողմի նկատմամբ չունեմ կողմնակալ վերաբերմունք, ինչպես նաև կանխակալության որևէ պատճառ և տվյալ գործով միանշանակ կարող եմ լինել անկողմնակալ: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կողմը շարունակում է պնդել իր կասկածներն իմ անկողմնակալության կամ անաչառության վերաբերյալ, վերջինիս կասկածները փարատելու համար հայտնում եմ ինքնաբացարկ՝ վերջինիս մոտ արդարադատության նկատմամբ հավուր պատշաճի և օբյեկտիվ կարծիքի չխեղաթյուրման նպատակով...»:*

<sup>19</sup> Արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-21 որոշմամբ դատավոր Ա. Մերանգույանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը կարճվել է՝ դատավորի լիազորությունների դադարեցված լինելու հիմնավորմամբ:

<sup>20</sup> Վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել 11.12.2012թ., առաջին նիստը կայացել է 23.01.2013թ., ինքնաբացարկի որոշումները կայացվել են 2013 թվականի ապրիլի 8-ին:

ԱԽ կարգապահական հանձնաժողովի կողմից ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի երեք դատավորների կողմից նույն պատճառաբանությամբ ինքնաբացարկի միջնորդությունների բավարարման հիմքով կարգապահական վարույթ չհարուցելը վկայում է դատավորների նկատմամբ նույնաբովանդակ խախտումների դեպքում կիրառված երկակի ստանդարտների մասին:

**6. Դատավորի կողմից դատական ակտը կողմին ուշացումով ուղարկելու երկու նույնաբովանդակ դեպքերով Արդարադատության խորհրդի կողմից տրվել են երկու բացահայտ իրաբարմերժ լուծումներ:**

**Ա դեպք.** Դատավորի կողմից թույլ տրված խախտումը գնահատվել է որպես դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և հանգեցրել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ արձանագրվել է, որ դատարանը թիվ ԵՇԴ/0865/02/11 քաղաքացիական գործով վճիռը հրապարակել է **24.09.2012թ.**, սակայն դատական ակտը հայցվոր կողմը առձեռն ստացել է միայն **15.10.2012թ.**: Խորհուրդն արձանագրել է, որ դատական ակտը, հայցվորին հանձնելով վճռի հրապարակումից հետո քսանմեկերորդ օրը, պայմաններ են ստեղծվել թիվ ԵՇԴ/0865/02/11 քաղաքացիական գործով հայցվոր կողմի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված՝ անձի արդար դատաքննության տարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի խախտման համար: Դատավոր Ի. Բարսեղյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքով:

**Բ դեպք.** Դատավորի կողմից թույլ տրված նույնաբովանդակ խախտման համար Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել:

1. Թիվ ԵԿԴ 3012/02/11 քաղաքացիական գործով «Յունիբանկ» ՓԲԸ-ի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ արդարադատության խորհուրդ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Մուրոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Սույն քաղաքացիական գործով դատավոր Ա. Մուրոյանի կողմից վճռի հրապարակումը տեղի է ունեցել 24.05.2012թ., իսկ



կողմին վճռի օրինակն ուղարկվել է միայն 14.06.2012թ. և ստացվել է 15.06.2012թ.<sup>21</sup>, այսինքն՝ վճռի հրապարակումից երեք շաբաթ անց:

Կարող ենք արձանագրել, որ թիվ ԵԿԴ 3012/02/11 քաղաքացիական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Սուքոյանի կողմից թույլ տրված խախտումը նույնական է թիվ ԵՇԴ/0865/02/11 քաղաքացիական գործով Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ի. Բարսեղյանի կողմից թույլ տրված խախտման հետ, սակայն, ի հակադրություն վերջինիս, այն հիմք չի հանդիսացել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ ՀՀ արդարադատության խորհրդի կողմից բերված պատճառաբանությունները՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի պահանջների խախտման և դատարանի դրսևորած անգործության արդյունքում կողմի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված՝ անձի արդար դատաքննության տարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման իրավունքի խախտման համար պայմաններ ստեղծելու վերաբերյալ հավասարապես կիրառելի են նաև սույն գործով: Այնուամենայնիվ, կարգապահական հանձնաժողովի կողմից դատավոր Ա. Սուքոյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել՝ գործը ՀՀ վերաքննիչ դատարանում քննության փուլում գտնվելու և դատավորի գործունեությանը օրենքով չնախատեսված միջամտության արգելքի պատճառաբանությամբ:

2. 2012թ. թիվ 28105311 քրեական գործով մեղադրյալ Կ. Քոչարյանի պաշտպան Տ. Սուրադյանը դիմում է ներկայացրել ՀՀ արդարադատության խորհուրդ՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Գ. Մելիք-Սարգսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ<sup>22</sup>: Թիվ ԾԴ/0184/06/11 կալանքի վարույթի նյութերի

<sup>21</sup> Վճռի օրինակի ուղարկման և ստացման ամսաթիվը հաստատվում է փոստային ծրարի վրա առկա կնիքներով:

<sup>22</sup> Դիմումի ներկայացման համար հիմք է հանդիսացել կալանավորման մասին դատարանի որոշման դեմ բերված բողոքն առանց քննության թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը: Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.09.2011թ. որոշմամբ մեղադրյալ Կ. Քոչարյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը՝ երկու ամիս ժամանակով: Որոշման դեմ 26.09.2011թ. վերաքննիչ բողոք է բերել մեղադրյալի պաշտպանը: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (դատավոր՝ Գ. Մելիք-Սարգսյան) որոշում է կայացրել բողոքն առանց քննության թողնելու մասին՝ ժամկետանց լինելու հիմքով, քանի որ 26.09.2011թ. մեղադրյալի պաշտպանի կողմից բողոքը ներկայացվել

ուսումնասիրությամբ հաստատվել է, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ կալանավորման մասին որոշումը, որը բողոքարկվել է մեղադրյալի պաշտպանի կողմից, կայացվել է 25.09.2011թ., իսկ որոշման դեմ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է ուղարկվել 26.09.2011թ.: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննիչ բողոքը բերվում է առաջին աստիճանի դատարանի կալանավորման մասին որոշումը հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում: Ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում: Սույն գործով Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 25.09.2011թ. կայացված կալանավորման մասին որոշման դեմ վերաքննիչ բողոքը մեղադրյալի պաշտպանի կողմից ներկայացվել է օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում, սակայն Վերաքննիչ դատարանի կողմից բողոքը թողնվել է առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվել է 11.10.2011թ., սակայն պաշտպանին ուղարկվել է միայն 28.01.2012թ. որոշումն ընդունելուց 3.5 ամիս անց<sup>23</sup>:

Գործի նյութերի ուսումնասիրությամբ փաստվել է, որ ՀՀ վերաքննիչ դատարանը կալանավորման մասին որոշման դեմ ներկայացված բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով, այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է որոշման ընդունման հենց հաջորդ օրը՝ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում: Մենք արձանագրել ենք նաև, որ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշումն ուղարկվել է կողմին այն ընդունելու պահից 3.5 ամիս անց, որի հետևանքով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նշված որոշումը բեկանելու դրությամբ արդեն իսկ Կ. Քոչարյանի նկատմամբ առաջին աստիճանի դատարանի մեղադրական դատավճիռը մտել էր օրինական ուժի մեջ: Թույլ տված խախտման հետևանքով մեղադրյալը ըստ էության զրկվել է իր կալանավորումը վիճարկելու հնարավորությունից:

---

է դատարանի 15.09.2011թ. որոշման դեմ: Վերաքննիչ դատարանի՝ 11.10.2011թ.-ով թվագրված որոշումը մեղադրյալի պաշտպանի կողմից ստացվել է միայն 31.01.2012թ.:

<sup>23</sup> Ինչ վերաբերում է ՀՀ վերաքննիչ դատարանի գրության մեջ նշված՝ 17.10.2011թ. որոշումը մեղադրյալին ուղարկելու հանգամանքին, ապա Պաշտպանի կողմից կալանքի վարույթի նյութերի ուսումնասիրությամբ հաստատվել է, որ գործում առկա չէ դատարանի կողմից 17.10.2011թ. որոշումն ուղարկելու վերաբերյալ որևէ փոստային անդորրագիր:

Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վերոգրյալ խախտման հիմքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, մինչդեռ, նույնաբնույթ խախտումներ թույլ տալու հիմքով ՀՀ արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ, այլ դատավոր ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Ընդ որում, ի տարբերություն թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ արձանագրված խախտումների, որոնք տեղ էին գտել քաղաքացիական դատավարության շրջանակներում, սույն գործով խախտման հետևանքներն ըստ էության վերացնել հնարավոր չի եղել, քանի որ մեղադրյալը փաստորեն զրկվել է կալանավորման մասին որոշումը բողոքարկելու հնարավորությունից:

**7. Դատավորի կողմից չպատճառաբանված դատական ակտ կայացնելու նույնաբովանդակ դեպքերով Արդարադատության խորհրդի կողմից տրվել են երկու բացահայտ իրաբարմերժ լուծումներ:**

**Ա դեպք. Դատավորի կողմից թույլ տրված խախտումը գնահատվել է որպես դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և հանգեցրել կարգապահական պատասխանատվության:**

ՀՀ արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20/2013 որոշմամբ<sup>24</sup> Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ի. Բարսեղյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության թիվ ԵՇԴ/1276/02/10 քաղաքացիական գործով չպատճառաբանված դատական ակտ կայացնելու համար:

Թիվ ԵՇԴ/1276/02/10 քաղաքացիական գործով կայացված վճռի պատճառաբանական մասը. «Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցային պահանջը հիմնավորված չէ և ենթակա է մերժման հետևյալ փաստարկմամբ. Այսպես. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը: Վիճահարույց պարագայում, հայցվոր Մանուշակ Միմոնյանն իր հայցապահանջը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել, որևէ կերպ չի ապացուցել իր կողմից վկայակոչված փաստերը, դատարանն էլ գործի քննությամբ

<sup>24</sup> Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու երկրորդ հիմքով:

*հայցապահանջը հիմնավորող որևէ ապացույց ձեռք չի բերել, որպիսի պարագայում հայցի բավարարման մասին խոսք չի կարող»:*

Խորհուրդը գտել է, որ դատարանը, կայացնելով չպատճառաբանված դատական ակտ, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասի, 131-րդ հոդվածի 1-ին մասի և 132-րդ հոդվածի 1-ին մասի ակնհայտ և կոպիտ խախտումներ: Արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ թիվ ԵՇԴ/1276/02/10 քաղաքացիական գործով դատարանի կողմից 04.10.2012թ. կայացված վճռով մերժվել է հայցապահանջն այն հիմքով, որ հայցվորի կողմից չեն ներկայացվել իր վկայակոչած հանգամանքները հիմնավորող ապացույցներ: Նման դիրքորոշումը դատարանը փաստարկել է միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում ամրագրված դրույթների շարադրմամբ:

### **Բ դեպք. Սույն գործով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթ չի հարուցվել**

2012թ. օգոստոսի 16-ին «Հայփոստ» ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ արդարադատության խորհրդին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Դիմումով ներկայացված հիմքերից մեկն առնչվել է թիվ ԵԿԴ 0699/02/12 գործով կայացված վճռի հիմնավորված և պատճառաբանված չլինելու հանգամանքին:

Թիվ ԵԿԴ 0699/02/12 գործով կայացված վճռի պատճառաբանական մասը.  
*«...դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 հոդվածի. «Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: 2. Վնասներ են՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաև չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ): 3. Եթե իրավունքը խախտած անձը դրա հետևանքով ստացել է*

եկամուտներ, ապա անձր, ում իրավունքը խախտվել է, մյուս վնասների հետ միասին, բաց թողնված օգուտի հատուցման պահանջի իրավունք ունի՝ այդ եկամուտներից ոչ պակաս չափով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածը սահմանում է՝ «1. Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից»: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89 հոդվածը սահմանում է՝ «1. Աշխատանքային պայմանագիր կնքելու համար գործատուն պարտավոր է պահանջել հատկապես փաստաթղթերը՝ անձր հաստատող փաստաթուղթ, աշխատանքային գրքույկ /բացառությամբ առաջին անգամ կամ համատեղությամբ աշխատանքի ընդունվողների/ և սոցիալական ապահովության քարտ կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանք»: Տվյալ դեպքում պատասխանողի կողմից հայցվորին չի տրամադրվել աշխատանքային գրքույկը, որի հետևանքով հայցվորը հնարավորություն չի ունեցել այն ներկայացնելու համապատասխան ընկերությանը, որի հետ ցանկացել է կնքել աշխատանքային պայմանագիր, այս իսկ պատճառով պատասխանողի կողմից հայցվորին պատճառվել է վնաս և, որպես բաց թողնված օգուտ, պատասխանողը պետք է այն հատուցի»:

Վերը նշված Ա և Բ դեպքերում ներկայացված երկու դատական ակտերի պատճառաբանական մասերի համեմատությունը վկայում է, որ նշված երկու դեպքերի միջև, վճռի հիմնավորման չափանիշների տեսանկյունից, էական տարբերություններ չկան: Տարբերությունն ըստ էության հանգում է նրան, որ առաջին դեպքում դատարանն իր դիրքորոշումը<sup>25</sup> փաստարկել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում ամրագրված դրույթների շարադրմամբ, իսկ երկրորդ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17, 1058 հոդվածներում և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածում ամրագրված դրույթների շարադրմամբ: Այնուամենայնիվ, ԱԽ կարգապահական հանձնաժողովի կողմից Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել սկզբում՝ գործը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում քննության փուլում գտնվելու, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից վճիռը բեկանելու և փոփոխելու որոշում կայացնելուց և դատական

<sup>25</sup> Տվյալ դեպքում պատասխանողի կողմից հայցվորին չի տրամադրվել աշխատանքային գրքույկը, որի հետևանքով հայցվորը հնարավորություն չի ունեցել այն ներկայացնելու համապատասխան ընկերությանը, որի հետ ցանկացել է կնքել աշխատանքային պայմանագիր, այս իսկ պատճառով պատասխանողի կողմից հայցվորին պատճառվել է վնաս և որպես բաց թողնված օգուտ պատասխանողը պետք է այն հատուցի:

ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ ակնհայտ և կոպիտ խախտում չարձանագրելու պատճառաբանությամբ: Մինչդեռ, ՀՀ արդարադատության խորհրդի 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ ամրագրված դատական ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության վերաբերյալ չափանիշները հավասարապես կիրառելի էին նաև Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի կողմից թիվ ԵԿԴ 0699/02/12 գործով կայացված վճռի դեպքում:

**8. Դատավորի կողմից անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտելու նույնաբովանդակ դեպքերով տրվել են երկու բացահայտ իրարարմերժ լուծումներ:**

**Ա դեպք.** Դատավորի կողմից թույլ տրված խախտումը գնահատվել է որպես դատավարական նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և հանգեցրել կարգապահական պատասխանատվության:

ՀՀ արդարադատության խորհրդի 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ո-2 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Արամյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննարկելու մասին 27.11.2010թ. որոշման մեջ դատավորն օգտագործել է «... Ա. Պողոսյանը ... *կրկին անգամ կատարել է ծանր հանցագործություն...*» ձևակերպումը՝ այդպիսով ըստ էության դիրքորոշում հայտնելով Ա. Պողոսյանի մեղավորության մասին, ինչը «Վարքագծի կանոնների» 16-րդ կանոնի «է» կետով ամրագրված արգելքի խախտում է: Խորհուրդը փաստել է, որ խախտումն իր բնույթով կոպիտ է, քանի որ հանգեցրել է հիմնարար սահմանադրական արժեքի (անմեղության կանխավարկածի ոտնահարման):

Նույնաբովանդակ հիմքերով ՀՀ արդարադատության խորհրդի 05.11.2010թ. թիվ ԱԽ-19-Ո-20 և 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ո-1 որոշումներով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացյանը և ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Արազյանը<sup>26</sup>:

---

<sup>26</sup> Բոլոր երեք կարգապահական գործերով վարույթի հարուցման առիթ է հանդիսացել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը հասցեագրված Կարգապահական հանձնաժողովին:

Մենք արձանագրել ենք, որ անմեղության կանխավարկածը խախտող և մեղադրյալի/ամբաստանյալի/ կողմից ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն կատարելու հանգամանքը ընդունելու մասին վկայող նույնաբովանդակ ձևակերպումներ տեղ են գտել նաև այլ դատավորների որոշումներում, որոնք, սակայն, կարգապահական պատասխանատվության չեն ենթարկվել:

**Բ դեպք. Սույն գործերով դատավորների կողմից թույլ տրված նույնաբովանդակ խախտման համար կարգապահական վարույթ հարուցելու որևէ գործընթաց չի նախաձեռնվել:**

1. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մ. Սիմոնյանը վերաքննիչ բողոքի հիման վրա ստուգման է ենթարկել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ 27.11.2010թ. որոշման օրինականությունը: Դատարանն իր 09.12.2010թ. որոշման եզրափակիչ մասում նշել է. «... հաշվի առնելով .... մեղադրյալի կողմից **նախկինում ծանր հանցագործություն կատարելու համար դատապարտված ու դատվածությունը մարված չլինելու պայմաններում նոր ծանր հանցագործություն կատարելը...** դատարանի որոշումը պետք է թողնել ուժի մեջ՝ այն օրինական և հիմնավորված լինելու պատճառով»:

Սույն որոշումն ուշագրավ է նաև նրանով, որ նույն գործով առաջին աստիճանի դատավոր Ս. Արամյանը նույնաբովանդակ ձևակերպման համար ենթարկվել է կարգապահական պատասխանատվության ՀՀ արդարադատության խորհրդի 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ռ-2 որոշմամբ (առիթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը Կարգապահական հանձնաժողովին): Իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորը, որն իր որոշմամբ նույնպես մեղադրյալի կողմից հանցագործություն կատարելու վերաբերյալ ձևակերպմամբ, ըստ էության, դիրքորոշում է արտահայտել Ա. Պողոսյանի մեղավորության վերաբերյալ, որևէ պատասխանատվության չի ենթարկվել: Այսպիսով, նույն դատական գործի շրջանակներում երկու դատական աստիճանների դատարանների դատավորներ թույլ են տվել անմեղության կանխավարկածը խախտող նույն սխալները, սակայն կարգապահական պատասխանատվության է ենթարկվել միայն առաջին աստիճանի դատարանի դատավորը:

2. Թիվ ԵԿԴ/0580/06/09 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.07.2010թ. որոշմամբ արձանագրվել է, որ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, համապատասխանաբար, Ա. Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին և այն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշումները, inter alia, հիմնավորել են այն հանգամանքով, որ Ա. Առաքելյանը «կատարել է հանցանք...»: Այդպիսով փաստացի քննարկման առարկա է դարձվել իրեն վերագրվող արարքներում Ա. Առաքելյանի մեղավորության հարցը և հաստատված է համարվել նրա մեղավորությունը: Վճռաբեկ դատարանը գտել է, որ Ա. Առաքելյանին կալանավորելու մասին դատական ակտում նրա մեղավորությունը հաստատված համարելը նրա անմեղության կանխավարկածի երաշխիքի խախտում է: Այնուամենայնիվ, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի համապատասխան դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որևէ գործընթաց չի սկսվել:

Այսպիսով, նույն անմեղության կանխավարկածի խախտումը, որը նաև արձանագրվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ, ի տարբերություն վերոնշյալ դեպքերի, հիմք չի հանդիսացել Վճռաբեկ դատարանի կողմից Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին վարույթ հարուցելու միջնորդություն ներկայացնելու համար: Նշենք, որ կարգապահական խախտում թույլ տված դատավորը համապատասխան ժամանակահատվածում հանդիսացել է նաև ՀՀ արդարադատության խորհրդի անդամ:

Ընդ որում, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Գ. Խանդանյանը իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ. «...քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ Ա.Առաքելյանը հրաժարվում է ցուցմունքներ տալուց, կատարել է ծանր հանցագործություն, որի համար նախատեսվում է 5-10 տարի ազատազրկում, ուստի դատարանը գտնում է, որ հանցագործության ծանրությունը կարող է բավարար լինել նրան ազատությունից զրկելու համար»: ՀՀ վճռաբեկ դատարանի 2010թ. հուլիսի 23-ի որոշմամբ արձանագրվել է, որ առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա. Առաքելյանին գրավով կալանքից ազատելը ճանաչվել է անթույլատրելի, քանի որ վերջինս կատարել է ծանր հանցագործություն, մինչդեռ Ա. Առաքելյանին մեղսագրված արարքներից ոչ մեկը ծանր հանցագործություն չէ: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ



առաջին ատյանի դատարանը Ա. Առաքելյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու հիմքում դնելով նաև նրա՝ լրություն պահպանելու իրավունքը, թույլ է տվել ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և Եվրոպական կոնվենցիայի պահանջների խախտում: Գնահատելով Ա. Առաքելյանի կալանքի ժամկետի տևողությունը երկարացնելու գործընթացը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն չի համապատասխանել անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքին վերաբերող ինչպես երկրի ներքին օրենսդրության, այնպես էլ Եվրոպական կոնվենցիայի հիմնարար պահանջներին: Վճռաբեկ դատարանը հաստատել է նաև, որ Ա. Առաքելյանին կալանքից գրավով ազատելը մերժելու և այն անթույլատրելի ճանաչելու մասին առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավորված և պատճառաբանված չեն: Այնուամենայնիվ, ներկայացված հիմքերից ոչ մեկի հիման վրա կարգապահական վարույթի հարուցման գործընթաց չի նախաձեռնվել:

**9. Դատավորի կողմից գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման էականորեն տարբեր դեպքերում Արդարադատության խորհուրդը դատավորների նկատմամբ կիրառել է նույն կարգապահական տույժը:**

Արդարադատության խորհրդի ստորև ներկայացված որոշումների վերլուծությունը վկայում է այն մասին, որ ՀՀ արդարադատության խորհուրդը 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-7 և ԱԽ-4-Ո-9 որոշումներով սահմանված հիմքերով և պատճառաբանությամբ մեկ գործով քննության ողջամիտ ժամկետների խախտման համար համաչափ համարելով «նախազգուշացում» կարգապահական տույժը, նույնքան համաչափ է համարել դրա կիրառումը դատավորի կողմից թվով 15 գործերով ողջամիտ ժամկետների անհամեմատ ավելի կոպիտ խախտման պարագայում /տես՝ թիվ ԱԽ-4-Ո-8/2013 որոշման մեջ արձանագրված խախտումներ/:

**Ա դեպք. Սույն գործերով քննության ողջամիտ ժամկետների խախտման համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նախազգուշացում» կարգապահական տույժի կիրառումը:**

1. ՀՀ արդարադատության խորհրդի 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-7 որոշմամբ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Վարդապետյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝

արդարադատություն իրականացնելիս դատավարական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում և վարքագծի կանոնների կոպիտ խախտում թույլ տալու հիմքերով՝ գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջը խախտելու համար: Մեղադրյալից բացի դատավարությանը մասնակցող անձինք են եղել նաև մեղադրողը, պաշտպանը, տուժողը, տուժողի ներկայացուցիչը և երկու վկա: Որոշմամբ արձանագրվել է, որ մինչ 07.11.2012թ. նշանակվել են 18 դատական նիստեր, որոնցից թվով 8 դատական նիստեր, ընդհանուր առմամբ, ավելի քան 3 ամսով հետաձգվել են մեղադրողի չներկայանալու պատճառով: Ընդ որում, նշված 8 դատական նիստերից 5-ին չի ներկայացել նաև տուժողի ներկայացուցիչը, ով, բացի այդ, բացակայել է ևս 2 այլ դատական նիստերից և նրա չներկայանալու պատճառով գործի քննությունը հետաձգվել է ավելի քան 1 ամսով: Խորհուրդն արձանագրել է, որ թիվ ԵԱՆԴ/0010/01/12 քրեական գործը Դատարանի կողմից վարույթ ընդունելու պահից սկսած ավելի քան 11 ամիս գտնվել է դատարանի վարույթում, գործի քննության ընթացքում մեղադրողը՝ 8 անգամ, իսկ տուժողի ներկայացուցիչը՝ 5 անգամ չեն ներկայացել դատական նիստերին և դատավորի կողմից այդ կապակցությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել: Դատավոր Ա. Վարդապետյանին հայտարարվել է նախազգուշացում:

2. ՀՀ արդարադատության խորհրդի 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-9 որոշմամբ գործի քննության ողջամիտ ժամկետների խախտման հիմքով կարգապահական պատասխանատվության է ենթարկվել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Հովսեփյանը: Խորհրդի որոշմամբ արձանագրվել է, որ դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԱՔԴ/1297/02/10 քաղաքացիական գործի քննությունը տևել է ավելի քան 30 ամիս (2 տարի 6 ամիս), որից մոտ 7 ամիս գտնվել է կասեցված վիճակում: Խորհուրդը գտել է, որ Դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ քաղաքացիական գործի քննությունը անհարկի ձգձգումներից զերծ պահելու և ողջամիտ ժամկետում քննելու կապակցությամբ, որի արդյունքում խախտվել է օրենսդրությամբ և վարքագծի կանոններով սահմանված գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման պահանջը: Դատավոր Ս. Հովսեփյանին հայտարարվել է նախազգուշացում:

Վերը նշված երկու որոշումները համադրենք ՀՀ արդարադատության խորհրդի 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-8 որոշման հետ, որով նույն կարգապահական տույժն (նախազգուշացում) է կիրառվել Երևան քաղաքի

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանի նկատմամբ՝ թվով 15 քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետները խախտելու համար:

**Բ դեպք. Թվով 15 գործերով դատավորի կողմից ողջամիտ ժամկետների անհամեմատ ավելի կոպիտ խախտման համար Արդարադատության խորհուրդը կրկին համաչափ է համարել նույն՝ «նախազգուշացում» կարգապահական տույժը:**

ՀՀ արդարադատության խորհրդի 31.01.2013թ. թիվ ԱԽ-4-Ո-8 որոշմամբ արձանագրվել է, որ թիվ ԵԿԴ/1067/02/09 քաղաքացիական գործը գտնվել է Դատարանի վարույթում շուրջ 41 ամիս՝ մինչև ինքնաբացարկի հայտնելը: Ընդ որում, 31.01.2012թ. նշանակված դատական նիստից հետո, որը չի կայացել Դատարանի վարույթում քննվող մեկ այլ անավարտ գործի քննության պատճառով, հաջորդ դատական նիստը նշանակվել է միայն 10 ամիս անց: Թիվ ԵԿԴ/0367/02/11 քաղաքացիական գործը Դատարանի կողմից վարույթ ընդունելուց հետո առաջին դատական նիստը կայացել է ավելի քան 18 ամիս անց: Իսկ երեք քաղաքացիական գործերով առաջին նիստը կայացել է Դատարանի կողմից գործը վարույթ ընդունելուց հետո ավելի քան 12 ամիս անց: Բացի այդ, ևս 10 քաղաքացիական գործերի քննությունը դատավորի մոտ տևել է շուրջ 1 տարի 10 ամիս, 1 տարի 8 ամիս, 18 ամիս, 15 ամիս, 17 ամիս, 16 ամիս, 15 ամիս, 17 ամիս, 18 ամիս և 26 ամիս: Ընդ որում, նշված քաղաքացիական գործերից 8-ի նիստերի միջակայքը կազմել է 6-7 ամիս:

**10. Դատավորների կողմից ըստ էության նույնաբովանդակ խախտումներ թույլ տալու համար Արդարադատության խորհուրդը առանց հիմնավորելու կիրառել է կարգապահական տույժի տարբեր տեսակներ:**

**Ա դեպք. Դատավորի կողմից համաներման կիրառման կարգի խախտման համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նախազգուշացում» կարգապահական տույժի կիրառումը:**

ՀՀ արդարադատության խորհրդի 07.12.2012թ. թիվ ԱԽ-24-Ո-29 որոշմամբ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ս. Բաղդասարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ դատավճռով համաներման ակտը չկիրառելու համար: Խորհուրդն արձանագրել է, որ Գ. Փահլևանյանը մեղադրվում էր մինչև 2011թ. մայիսի 1-ը կատարած երկու հանցագործությունների մեջ,

որոնցից յուրաքանչյուրի նկատմամբ կիրառելի էր Համաներման ակտը: Խորհուրդը գտել է, որ Դատարանը թույլ է տվել նյութական օրենքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտում, քանի որ Գ. Փահլևանյանի կողմից կատարված արարքներից յուրաքանչյուրի դեպքում Համաներման ակտը կիրառելի լինելու պայմաններում Դատարանն իր դատավճռում ընդհանրապես չի անդրադարձել Համաներման ակտի կիրառման հարցին<sup>27</sup>: Դատավոր Ս. Բաղդասարյանին հայտարարվել է **նախազգուշացում**<sup>28</sup>:

Այս դեպքում դատավորը թույլ է տվել նյութական օրենքի ակնհայտ և կոպիտ խախտում, քանի որ չի կիրառել Համաներման ակտը, այն դեպքում, երբ այն եղել է կիրառման ենթակա: Վերոգրյալ որոշման մեջ մատնանշված փաստերը համադրելի են Արդարադատության խորհրդի մի քանի այլ որոշումներում մատնանշված փաստերի հետ, որոնցով նույնպես արձանագրվել է համաներման կիրառման կարգի խախտում: Ի տարբերություն վերը նշված գործի, ստորև ներկայացված գործերով դատավորի կողմից Համաներման ակտով նախատեսված արգելքի կամ սահմանափակման պայմաններում անձի նկատմամբ կիրառվել է համաներմում կամ Համաներման ակտի կիրառման ոչ ենթակա դրույթը:

**Բ դեպք. Դատավորի կողմից համաներման կիրառման կարգի խախտման համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով» կարգապահական տույժի կիրառումը:**

1. ՀՀ արդարադատության խորհրդի 10.02.2012թ. թիվ ԱԽ-1-Ո-7 որոշմամբ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Լ. Աթանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ համաներման ակտով նախատեսված ուղղակի արգելքի պայմաններում դատապարտյալի նկատմամբ համաներմում

---

<sup>27</sup> Դատարանն իր կողմից կայացված դատավճռից շուրջ 9 ամիս անց, 25.09.2012թ. կայացրել է դատավճռի անհստակությունը լուծելու մասին որոշում, որով Գ. Փահլևանյանի նկատմամբ կիրառել է համաներման ակտը՝ ազատելով ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարելու համար նշանակված պատժից: Ընդ որում, 25.09.2012թ. անհստակությունը լուծելու մասին որոշմամբ դատավորի կողմից համաներման ակտի կիրառումը վարույթ հարուցող մարմինը գնահատել էր որպես դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում, որը, սակայն, Արդարադատության խորհրդի կողմից չի ընդունել:

<sup>28</sup> Կարգապահական վարույթը հարուցվել է ՀՀ Արդարադատության նախարարի հրամանով:

կիրառելու համար<sup>29</sup>: Երևանի քրեական դատարանի 08.07.2008թ. դատավճռով Տ. Գալուստովը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով և դատապարտվել ազատազրկման: *ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան՝ երեք տարի ժամկետով: 27.06.2011թ. որոշմամբ դատարանը դատապարտյալի նկատմամբ կիրառել է համաներում և նրան ազատել դատավճռով նշանակված պատժի կրումից: Խորհուրդն արձանագրել է, որ դատավոր Լ. Աթանյանը Համաներման ակտով նախատեսված սահմանափակումն անտեսելու հետևանքով, մասնավորապես այն, որ Տ. Գալուստովը դատապարտված է եղել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով, որի նկատմամբ համաներումը կիրառելի չէր, Համաներման ակտի կիրառմամբ դատապարտյալին ազատել է դատավճռով նշանակված պատժի կրումից: Դատավոր Լ. Աթանյանին հայտարարվել է խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:*

2. ՀՀ արդարադատության խորհրդի 24.12.2009թ. թիվ ԱԽ-21-Ո-28 որոշմամբ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Մելքոնյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ համաներում կիրառելու կարգը խախտելու համար: Համաներումը կիրառվել է դատապարտյալի նկատմամբ, այն դեպքում, երբ վերջինիս նկատմամբ այն կիրառելի չի եղել: Դատարանի 21.08.2008թ. դատավճռով Հ. Ավագյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով. *նրա նկատմամբ նշանակված 1 տարի ազատազրկման պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան 2 տարի ժամկետով: Դատարանի 17.09.2009թ. որոշմամբ վերացվել է Հ. Ավագյանի նկատմամբ սահմանված պայմանական դատապարտությունը, և նա ազատվել է 1 տարի ժամկետով ազատազրկումից: Խորհուրդն արձանագրել է, որ ՀՀ ԱԺ-ի «Համաներում հայտարարելու մասին» որոշման 8-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ համաներումը չի կիրառվում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ: Մինչդեռ, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ՝ դատավճռով Հ. Ավագյանի նկատմամբ սահմանված պայմանական դատապարտությունը վերացվել է, և նա ազատվել է մեկ տարի ժամկետով*

---

<sup>29</sup> Վարույթը հարուցվել է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից: Վարույթ հարուցելու առիթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունը կարգապահական հանձնաժողովին:

ազատագրկումից: **Դատավոր Ռ. Մելքոնյանին հայտարարվել է նկատողություն՝ գուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:**

3. ՀՀ արդարադատության խորհրդի 10.02.2012թ. թիվ ԱԽ-1-Ո-4 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Լ. Ավետիսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ երկու գործերով համաներման դրույթների սխալ կիրառման համար՝ նյութական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով: Խորհուրդը գտել է, որ դատավոր Լ. Ավետիսյանը Համաներման ակտով նախատեսված սահմանափակումներն անտեսելու հետևանքով խախտել է համաներմում կիրառելու կարգը: Երկու գործերով էլ կիրառվել էր Համաներման ակտի՝ նշանակված պատժից ազատելու դրույթը՝ նշանակված պատժի չկրած մասի՝ 1/4-ով կրճատելու դրույթի փոխարեն<sup>30</sup>: **Դատավոր Լ. Ավետիսյանին հայտարարվել է նկատողություն՝ գուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով<sup>31</sup>:**

4. ՀՀ արդարադատության խորհրդի 10.02.2012թ. թիվ ԱԽ-1-Ո-5 որոշմամբ ՀՀ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի դատավոր Ռ. Մելքոնյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Համաներման ակտով նախատեսված ուղղակի արգելքի պայմաններում համաներմում կիրառելու համար: **Դատավոր Ռ.**

---

<sup>30</sup> Դատարանի 07.07.2011թ. դատավճռով Ա. Խուրշուդյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և դատապարտվել է ազատագրկման երեք տարի ժամկետով: Համաներման ակտի կիրառմամբ Ա. Խուրշուդյանն ազատվել է նշանակված պատժից: Խորհուրդն արձանագրել է, որ Ա. Խուրշուդյանի նկատմամբ ենթակա էր կիրառման ոչ թե Համաներման ակտի 1-ին կետի 1-ին ենթակետը, այլ 8-րդ կետի 4-րդ ենթակետը, որի հիման վրա նրա նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը պետք է կրճատվեր 1/4-ով: Մեկ այլ գործով դատարանի 20.07.2010թ. դատավճռով Վ. Սարգսյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործություն կատարելու համար և ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատժը պայմանականորեն չի կիրառվել: Դատարանը 23.06.2011թ. որոշմամբ դատապարտյալի նկատմամբ համաներման կիրառմամբ ազատել է նրան դատավճռով նշանակված պատժից: Խորհուրդն արձանագրել է, որ Վ. Սարգսյանի նկատմամբ կիրառելի էր ոչ թե Համաներման ակտի 1-ին կետի 2-րդ ենթակետը, այլ 8-րդ կետի 5-րդ ենթակետը, որի հիման վրա նրա նկատմամբ նշանակված պատժի չկրած մասը պետք է կրճատվեր 1/4-ով:

<sup>31</sup> Կարգապահական վարույթները հարուցվել են ԱԽ կարգապահական հանձնաժողովի կողմից: Հարուցման առիթը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գրությունները կարգապահական հանձնաժողովին:

**Մելքոնյանին հայտարարվել է խիստ նկատողություն՝ զուգորդված մեկ տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով<sup>32</sup>:**

ՀՀ արդարադատության խորհրդի վերոգրյալ որոշումների վերլուծությունը վկայում է Խորհրդի կողմից երկակի ստանդարտների կիրառման մասին՝ նույնաբովանդակ խախտումների դեպքում դատավորի նկատմամբ կարգապահական տույժի տեսակը ընտրելիս: Այսպես, դատավորի կողմից Համաներման ակտը կիրառելի լինելու պայմաններում դատավճռով այն չկիրառելու համար Խորհուրդը դատավորի նկատմամբ կիրառել է «նախազգուշացում» կարգապահական տույժը<sup>33</sup>, որը, ըստ ՀՀ դատական օրենսգրքի, կիրառելի է Արդարադատության խորհրդի կողմից նվազ ծանրության ճանաչված կարգապահական խախտման համար, իսկ դատավորի կողմից Համաներման ակտով նախատեսված արգելքի կամ սահմանափակման պայմաններում անձի նկատմամբ համաներում կամ Համաներման ակտի կիրառման ոչ ենթակա դրույթը կիրառելու (պատժից ազատելու դրույթը՝ նշանակված պատժի չկրած մասը կրճատելու դրույթի փոխարեն) համար, երբ որոշ դեպքերում դատարանի կողմից նշանակված պատիժը ընդհանրապես եղել է պայմանականորեն չկիրառված, Խորհուրդն ընտրել է կարգապահական տույժի խիստ տեսակները: Ընդ որում, այս տույժերի տեսակների ընտրության չափանիշները նույնպես հաճախ եղել են անհասկանալի և չհիմնավորված:

**11. Կալանավորման որոշման արդյունքում արձանագրված էականորեն տարբեր խախտումների դեպքերում Արդարադատության խորհուրդը դատավորների նկատմամբ կիրառել է նույն կարգապահական տույժը:**

**Ա դեպք. Կալանավորման մասին որոշմամբ մեղադրյալի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել դատավորի նկատմամբ «նախազգուշացում» կարգապահական տույժի կիրառումը:**

---

<sup>32</sup> Խորհուրդն արձանագրել է, որ դատավոր Ռ. Մելքոնյանը Համաներման ակտով նախատեսված սահմանափակումն անտեսելու հետևանքով, մասնավորապես այն, որ Ռ. Դավթյանի նկատմամբ վերջին տասը տարվա ընթացքում արդեն մեկ անգամ քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա, հետևապես համաներումը նրա նկատմամբ կիրառելի չէր, այնուհանդերձ Համաներման ակտի կիրառմամբ Ռ. Դավթյանին ազատել է ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ազատագրվման ձևով մեկ տարի ժամկետով նշանակված պատժից:

<sup>33</sup> Թիվ ԱԽ-24-Ռ-29 (07.12.2012թ.) որոշում:

1. ՀՀ արդարադատության խորհրդի 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ո-2 որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Արամյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Խորհուրդն արձանագրել է, որ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը քննարկելու մասին 27.11.2010թ. որոշման մեջ դատավորն օգտագործել է «... Ա. Պողոսյանը ... **կրկին անգամ կատարել է ծանր հանցագործություն...**» ձևակերպումը՝ այդպիսով, ըստ էության, դիրքորոշում հայտնելով ամբաստանյալ Ա. Պողոսյանի մեղավորության մասին: Դատարանն իր որոշմամբ մեղադրյալ Ա. Պողոսյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը դիտարկելիս՝ քննարկման առարկա է դարձրել առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը: Այսինքն, տվյալ պարագայում, դատավորի կողմից ոչ միայն չի պահպանվել մինչև մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը անձին անմեղ համարելու հիմնարար սկզբունքը, այլև դատավորը Ա. Պողոսյանի կողմից հանցագործություն կատարելու հանգամանքն ընդունելով՝ խափանման միջոցին հաղորդել է պատժի տարրեր, որով և խախտել է մեղադրյալի անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքը: Դատավոր Ս. Արամյանին հայտարարվել է նախազգուշացում:

**Բ դեպք. Կալանավորման մասին որոշմամբ մեղադրյալի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումից բացի մեղադրյալի ազատության և անձեռնմխելիության հիմնական իրավունքն առանց օրենքի պահանջները հաշվի առնելու սահմանափակելու համար՝ Արդարադատության խորհուրդը կրկին համաչափ է համարել դատավորի նկատմամբ միայն «նախազգուշացում» կարգապահական տույժի կիրառումը:**

1. Արդարադատության խորհրդի 05.11.2010թ. թիվ ԱԽ-19-Ո-20 որոշմամբ կիրառվել է նույն կարգապահական տույժը, սակայն վերոգրյալ հիմքից<sup>34</sup> բացի, որոշմամբ արձանագրվել է նս մեկ խախտում, որն արտահայտվել է դատավորի կողմից առանց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ

---

<sup>34</sup> ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացյանը, իր 18.09.2010թ. և 22.09.2010թ. որոշումներում մեղադրյալ Ա. Եդիգարյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը դիտարկելիս, քննարկման առարկա է դարձրել առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը: Ավելին, հիմնվելով մեղադրյալի կողմից նրան մեղսագրվող հանցագործությունը կատարած լինելու վերաբերյալ նախաքննական մարմնի կարծիքի և ներքին համոզմունքի վրա՝ արձանագրել է, որ այն «հիմնավորված է»:



հողվածի 1-ն և 3-րդ մասերով սահմանված իմպերատիվ պահանջները հաշվի առնելու՝ մեղադրյալի ազատության և անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակմամբ: Ինչպես ԱԽ կարգապահական հանձնաժողովը, այնպես էլ Խորհուրդն արձանագրել են, որ Դատարանը 18.09.2010թ. և 22.09.2010թ. որոշումներով սահմանափակել է մեղադրյալի ազատության և անձեռնմխելիության հիմնական իրավունքը՝ առանց հաշվի առնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ն և 3-րդ մասերով սահմանված իմպերատիվ պահանջները: Խորհուրդն ընդգծել է, որ խափանման միջոցները ոչ մի դեպքում չեն կարող դիտվել որպես պատժամիջոց՝ կատարված գործողության համար: Դրանք կրում են կանխարգելիչ բնույթ և պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ առկա է իրական մտավախություն այն մասին, որ մեղադրյալը կարող է դրսևորել այնպիսի վարքագիծ, որը ինչ-որ կերպ կարող է խոչընդոտել նախնական քննության և դատական քննության բնականոն գործընթացը: Ընդ որում, մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա: Այնուամենայնիվ, վերոգրյալ դեպքերում դատավորների նկատմամբ կիրառվել է նույն կարգապահական տույժը՝ առանց հաշվի առնելու կարգապահական պատասխանատվության հիմքերում առկա էական տարբերությունները: Արդարադատության խորհրդի 05.11.2010թ. թիվ ԱԽ-19-Ո-20 որոշմամբ, ի հավելումն անմեղության կանխավարկածի խախտման (այս խախտումն արձանագրվել է բոլոր երեք որոշումներում), արձանագրվել է, որ դատավորի կողմից կալանավորումը կիրառվել է՝ առանց հաշվի առնելու խափանման միջոցի հիմքերի վերաբերյալ իմպերատիվ օրենսդրական պահանջները: Այնուամենայնիվ, այս խախտման արձանագրումը կարգապահական տույժի ընտրության վրա որևէ ազդեցություն չի ունեցել:

2. ՀՀ արդարադատության խորհրդի 21.01.2011թ. թիվ ԱԽ-1-Ո-1 որոշմամբ ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. Արագյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նույնաբովանդակ հիմքով<sup>35</sup>:

---

<sup>35</sup> Տվյալ կարգապահական գործով Խորհուրդն արձանագրել է, որ Դատարանը (դատավոր՝ Լ. Արագյան) իր 09.12.2010թ. որոշմամբ մեղադրյալ Ս. Հակոբյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը դիտարկելիս քննարկման առարկա է դարձրել առաջադրված մեղադրանքում անձի մեղավորության հարցը: Այսինքն, տվյալ պարագայում դատավորի կողմից ոչ միայն չի պահպանվել մինչև մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն անձին անմեղ համարելու հիմնարար սկզբունքը, այլև, դատավորը, Ս. Հակոբյանի կողմից հանցագործություն կատարելու հանգամանքն ընդունելով, խափանման միջոցին հաղորդել է պատժի տարբեր, որով և խախտել է մեղադրյալի անմեղության կանխավարկածի

**Գ դեպք. Դատավորի կողմից մեղադրյալի նկատմամբ կալանքի կիրառումը անհիմն մերժելու համար Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նկատողություն զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով» կարգապահական տույժի կիրառումը:**

ՀՀ արդարադատության խորհրդի 26.03.2010թ. թիվ ԱԽ-5-Ո-04 որոշմամբ Խորհուրդը գտել է, որ տվյալ պարագայում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելը բխում էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի, 135-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներից: Որոշմամբ արձանագրվել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Խանդանյանը կալանքի կիրառումը մերժել է՝ պատճառաբանելով, որ առկա չէ հիմնավոր կասկած, որ Հ. Դավթյանը կատարել է իրեն մեղաագրվող արարքը: Մինդեռ Խորհուրդը գտել է, որ ընդհանուր իրավասության դատարանի հետևությունները հիմնավոր չեն, չեն բխում ներկայացված նյութերից, ինչի արդյունքում դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում:

Ընդ որում, Արդարադատության խորհրդի որոշման ընդունումից մի քանի ամիս անց հաստատվել է, որ դատավորի կողմից կալանքի միջնորդությունը քննելիս՝ իրապես բացակայել է հիմնավոր կասկածն այն մասին, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող հանցագործությունը, ինչն էլ հիմք է հանդիսացել նոր երևան եկած հանգամանքների հիմքով թիվ ԱԽ-5-Ո-04 որոշումը վերանայելու և այն ուժը կորցրած ճանաչելու համար: ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչության քննիչի 21.05.2010թ. որոշմամբ արձանագրվել է նախաքննությամբ ապացուցված այն փաստը, որ Հ. Դավթյանի արարքում բացակայել են ՀՀ քրեական օրենսգրքի 38-266 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմի

---

սահմանադրական երաշխիքը: 09.12.2010թ որոշման մեջ դատավոր Լ. Արազյանն օգտագործել է . «...հաշվի առնելով այն, որ Մ. Հակոբյանի կատարած հանցանքը...» ձևակերպումը այդպիսով ըստ էության դիրքորոշում հայտնելով ամբաստանյալի մեղավորության մասին: Խորհուրդն արձանագրել է նաև, որ Դատարանը 09.12.2010թ որոշմամբ սահմանափակել է մեղադրյալի ազատության և անձնական անձեռնմխելիության հիմնական իրավունքը՝ առանց հաշվի առնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված ինպերատիվ պահանջները (Վերջին հիմքը ներառված չի եղել կարգապահական հանձնաժողովի եզրակացության մեջ):

հատկանիշները: Հետևաբար, հիմնավորվել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից կալանքի միջնորդությունը քննելիս՝ իրապես բացակայել է հիմնավոր կասկածն այն մասին, որ մեղադրյալը կատարել է իրեն վերագրվող հանցագործությունը:

Վերոգրյալ որոշումների վերլուծությունից բխում է, որ դատավորի կողմից անմեղության կանխավարկածի խախտում թույլ տալու հետ միաժամանակ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու որոշումներով մեղադրյալի ազատության և անձեռնմխելիության իրավունքը անհիմն սահմանափակելու համար՝ Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նախագուշացում» կարգապահական տույժը, իսկ մեղադրյալի նկատմամբ կալանքի կիրառումն անհիմն մերժելու համար, որպես կարգապահական տույժ, կիրառել է նկատողությունը՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով: Ընդ որում, վերջին դեպքում՝ Խորհրդի որոշման ընդունումից մի քանի ամիս անց, հաստատվել է մեղադրյալի արարքում համապատասխան հանցակազմի հատկանիշների բացակայությունը:

**12. Կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու վերաբերյալ որոշումների կապակցությամբ դատավորներին պատասխանատվության ենթարկելիս Արդարադատության խորհուրդը կիրառում է երկակի ստանդարտներ:**

1. ՀՀ արդարադատության խորհրդի 22.01.2009թ. թիվ ԱԽ-2-Ո-11 որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ. Ափինյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ կալանավորման և կալանքը գրավով փոխարինելու անհիմն որոշում կայացնելու համար: Կարգապահական վարույթը հարուցվել է ՀՀ արդարադատության նախարարի հրամանով: Կարգապահական խախտման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի եզրակացությամբ արձանագրվել է, որ *դատարանի հետևողությունն այն մասին, թե բացակայում է դեպքին մեղադրյալի առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածը, անհիմն է, քանի որ այն պատճառաբանված չէ և չի բխում գործի նյութերից:* Սույն գործով Խորհուրդն արձանագրել է, որ դատարանը պետք է իր որոշման մեջ ծանրակշիռ փաստարկներով հիմնավորի խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը, ապա՝ դրա տեսակն ընտրելու պատճառները:

Մինչդեռ, դատավորի՝ 16.09.2008թ. կալանավորման և կալանքը գրավով փոխարինելու որոշման մեջ նշված է. «... *Բացի այդ Ս. Սաղաթեյանը իրեն մեղավոր չի ճանաչել վերագրվող արարքի կատարման մեջ, իսկ դատարանը քրեական գործի նյութերի հետազոտմամբ գտավ, որ հիմնավոր կասկածներ չկան այդ արարքների կատարմանը նրա առնչության վերաբերյալ*»: Եթե դատավորը գտնում է, որ հիմնավոր կասկածներ չկան այդ արարքների կատարմանը Ս. Սաղաթեյանի առնչության վերաբերյալ, ապա պարզ չէ, թե ինչ իրավական հիմնավորմամբ է Ս. Սաղաթեյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել կալանքը երկու ամիս ժամկետով, այնուհետև՝ կալանքը փոխարինվել գրավով: Դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը՝ Ս. Սաղաթեյանի նկատմամբ գրավը, որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց, կիրառելու մասով՝ օրինական ուժի մեջ թողնելով նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց երկու ամիս ժամկետով ընտրելու մասին որոշումը: Մույն կարգապահական գործով ՀՀ արդարադատության խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի ակնհայտ խախտում, և դատավոր Ռ. Ափինյանին հայտարարվել է նախազգուշացում<sup>36</sup>:

---

<sup>36</sup> Նույն որոշմամբ Խորհրդի կողմից մերժվել է ՀՀ արդարադատության նախարարի թիվ 58207508 քրեական գործով միջնորդությունը Ռ. Ափինյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Կարգապահական խախտման վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի եզրակացությամբ արձանագրվել է, որ դատարանը, քննության առնելով քննիչի միջնորդությունը, Վ. Մաթևոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց 2 ամիս ժամկետով կալանավորում ընտրելու մասին որոշում է կայացրել՝ միաժամանակ, պաշտպանների միջնորդությամբ, կալանքը գրավով փոխարինելը ճանաչելով թույլատրելի: Վարույթ հարուցող մարմինը գտել է, որ դատարանը կայացրել է անօրինական և չհիմնավորված որոշում, որի հետևանքով մեղադրյալ Վ. Մաթևոսյանի համար գործի քննությանը խոչընդոտելու և վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու համար նպատակադր պայմաններ են ստեղծվել: Նշված որոշումը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանվել է Վ. Մաթևոսյանի նկատմամբ գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասով՝ օրինական ուժի մեջ թողնելով նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց երկու ամիս ժամկետով ընտրելու մասին որոշումը: Խորհուրդն, իր հերթին, գտել է, որ սվյալ գործով մեղադրյալին կալանքից գրավով ազատելը չի հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին. նման հնարավորությունը բխում է օրենքի տառից, և դատավորի կողմից թույլ չեն տրվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ խախտումներ: Խորհուրդն անհրաժեշտ և նպատակահարմար չի համարել անդրադառնալ դատավորի գործողություններում մեղքի առկայության կամ բացակայության հարցին:

2. Վերոհիշյալ որոշման հետ ուղղակիորեն համադրելի է Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի 24.06.2011թ. թիվ ԱԽ-13-Ո-17 որոշումը: Այս դեպքում Խորհրդի կողմից կիրառվել է կարգապահական տույժի ամենախիստ տեսակը՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմելը, որը ենթակա է կիրառման միայն այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ<sup>37</sup>: Այսպես, Խորհուրդն արձանագրել է, որ Դատարանն իր 30.05.2011թ. որոշմամբ կալանավորումն այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելիս՝ որևէ ձևով չի պատճառաբանել նման եզրահանգման գալը, այլ ընդամենը որոշման պատճառաբանական մասում ուղղակի նշել է պաշտպանի կողմից դատարան ներկայացված միջնորդության հիմնավորումը և մեղադրող կողմի դիրքորոշումը միջնորդության վերաբերյալ: Նշենք նաև, որ որոշման ընդունումից հետո գրեթե մեկ ամիս անց վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է (07.07.2011թ. որոշմամբ):

Արդարադատության խորհուրդը դատավոր Ս. Մնացականյանի կարգապահական գործը քննելիս համադրել է այն 05.11.2010թ. թիվ ԱԽ 19-Ո-19 որոշման հետ: Հիմք ընդունելով նշված որոշման մեջ արտահայտված դիրքորոշումը<sup>38</sup>, և այն համադրելով քննարկվող գործի փաստական հանգամանքների հետ՝ Խորհուրդը գտել է, որ սույն գործով Ս. Մնացականյանի կողմից նույնպես դրսևորվել է կամայական մոտեցում, քանի որ կամայական մոտեցում է համարվում փաստերի վրա չհիմնված և չպատճառաբանված դատական ակտի կայացումն անկախ այն հանգամանքից, թե այդ դատական ակտով անձը կալանավորվում է, թե կալանքից ազատ է արձակվում: Սակայն, ի տարբերություն Խորհրդի կողմից

<sup>37</sup> ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 157, 3-րդ մաս

<sup>38</sup> «Անձին ազատությունից զրկելը կամայական է, երբ այն կատարվել է օրենքով սահմանված իրավական ընթացակարգերի խախտմամբ, ինչպես նաև այն դեպքում, երբ կողմնակի դիտորդի համար ակնհայտ է, որ տվյալ հանգամանքներում ազատությունից զրկելու հիմքերը պատշաճ և համոզիչ չեն: Այս հանգամանքները համակցության մեջ գնահատելով՝ Խորհուրդը եզրակացնում է, որ դատավորը ... ամբաստանյալին ... ազատությունից զրկելիս դրսևորել է կամայական մոտեցում»:

մեջբերված որոշման<sup>39</sup>, որով ամբաստանյալին ազատությունից զրկելիս կամայական մոտեցում դրսևորելու համար դատավոր Ս. Խաչատրյանին հայտարարվել է նկատողություն՝ գուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, այս դեպքում, մեղադրյալի նկատմամբ կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելիս կամայական մոտեցում դրսևորելու համար, Արդարադատության խորհուրդը դատավոր Ս. Մնացականյանի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ դիմեց Հանրապետության Նախագահին՝ կիրառելով Դատական օրենսգրքով սահմանված ամենախիստ կարգապահական տույժը:

3. ՀՀ արդարադատության խորհրդի վերոգրյալ որոշման լույսի ներքո Խորհրդի երկակի ստանդարտների կիրառումն առավել ակնհայտ է դառնում ստորև ներկայացված որոշման վերլուծության արդյունքում: Այսպես, ՀՀ արդարադատության խորհրդի 22.04.2011թ. թիվ ԱԽ-8-Ո-11 որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ս. Արդամանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին անհիմն որոշում կայացնելու համար: Սույն կարգապահական գործով ՀՀ արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ, Վ. Գևորգյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշման հիմքում դրված ենթադրյալ գործողությունների կատարման հավանականությունը պայմանավորելով Վ. Գևորգյանի կողմից իր իրավունքներից օգտվելու հանգամանքներով, այն է՝ Վերաքննիչ դատարանի դատական նիստերին չմասնակցելը, առաջադրված մեղադրանքը չընդունելը և իրեն մեղավոր չճանաչելը, վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի, 65-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի և 3-րդ մասի պահանջները: Բացի այդ, Խորհուրդն արձանագրել է, որ որոշման մեջ նշելով, որ առկա է հիմնավոր կասկած, որ Վ. Գևորգյանը կատարել է իրեն մեղսագրված արարքը, Վերաքննիչ դատարանն իր այդ հետևությունը գործով ձեռք բերված որևէ ապացույցով չի հիմնավորել: Վերաքննիչ դատարանը չի մատնանշել որևէ փաստական տվյալ, որը հնարավորություն կտար անաչառ դիտորդին եզրակացնելու, որ Վ. Գևորգյանը հնարավոր է, որ կատարած լինի նրան մեղսագրված արարքը: Հետևաբար, հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը հիմնավորված և պատճառաբանված չէ:

<sup>39</sup> ԱԽ 19-Ո-19 (05.11.2010թ.) որոշում:

Վերոգրյալ խախտումները թույլ տալու համար Արդարադատության խորհրդի կողմից դատավոր Մ. Արդամանյանին հայտարարվել է նկատողություն՝ 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով: Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին չհիմնավորված որոշում կայացնելու համար, որի արդյունքում մեղադրյալը 2 ամիս 17 օր անհիմն կերպով մնացել է կալանավորված վիճակում, Արդարադատության խորհուրդը համաչափ է համարել «նկատողություն՝ 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով» կարգապահական տույժի կիրառումը, մինչդեռ, կալանքը այլընտրանքային խափանման միջոց գրավով փոխարինելու չհիմնավորված և չպաճառաբանված որոշում կայացնելու համար, որի հետևանքով որևէ անձ ազատությունից անհիմն չի զրկվել, իսկ կալանքից ազատ արձակված անձը, ինչպես հետագայում հաստատվեց, որևէ առնչություն չի ունեցել իրեն վերագրվող հանցագործությանը, դատավորի նկատմամբ համաչափ է համարել ամենախիստ կարգապահական տույժի կիրառումը<sup>40</sup>, որը ենթակա է կիրառման միայն այն դեպքում, եթե դատավորի կողմից թույլ տրված կարգապահական կոպիտ կամ պարբերական խախտման հետևանքով նա այլևս անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ:

Չպատճառաբանված դատական ակտ կայացնելու հետևանքով դատավորի կողմից թույլ տրված դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումը նույն հիմնավորմամբ դրվել է նաև ՀՀ արդարադատության խորհրդի 2013 թվականի ապրիլի 12-ի որոշման հիմքում: 12.04.2013թ. թիվ ԱԽ-12-Ո-20 որոշմամբ ՀՀ արդարադատության խորհուրդն արձանագրել է, որ *չպատճառաբանված դատական ակտերը չեն կարող ապահովել դատական իշխանության և դատարանների կողմից կայացված դատական ակտերի նկատմամբ հանրության վստահությունը, այլ ընդհակառակը՝ չպատճառաբանված, չհիմնավորված դատական ակտերը նսեմացնում են դատական իշխանության հեղինակությունը և խաթարում են արդարադատության բուն էությունը: Տվյալ դեպքում Դատարանի վճռում արտացոլված չէ դատարանի կողմից որևէ ապացույցի հետազոտում, և պարզ չէ, թե դատարանը որ ապացույցների հետազոտման արդյունքում է եկել եզրահանգման՝ հայքը մերժելու առումով: Այսպիսով, դատարանի կողմից թիվ ԵՇԴ/1276/02/10 քաղաքացիական գործով ոչ միայն չի որոշվել ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, այլ նաև հայքը մերժելիս՝ ընդհանրապես չի պատճառաբանվել, թե հայցվորի կողմից ներկայացված որ ապացույցն է*

<sup>40</sup> Դատավոր Մ. Մնացականյանը ՀՀ արդարադատության խորհրդի կողմից երբևէ կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

գնահատվել և համարվել թույլատրելի կամ ոչ թույլատրելի: Վերոգրյալի արդյունքում Խորհուրդը գտել է, որ դատարանը, կայացնելով չպատճառաբանված դատական ակտ, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 3-րդ մասի, 131-րդ հոդվածի 1-ին մասի և 132-րդ հոդվածի 1-ին մասի ակնհայտ և կոպիտ խախտումներ: Բացի վերոնշյալ խախտումից Խորհուրդն արձանագրել է ևս երկու քաղաքացիական գործերով դատավորի կողմից թույլ տրված դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ, սակայն այս դեպքում, ի տարբերություն 24.06.2011թ. թիվ ԱԽ-13-Ո-17 որոշմամբ դատավոր Ս. Մնացականյանի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի, դատավոր Ի. Բարսեղյանին հայտարարվել է նկատողություն՝ զուգորդված 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով:

Ներկայացված գործերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ ՀՀ Արդարադատության խորհրդի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական տույժի ընտրությունը հաճախ կատարվել է ոչ միասնական չափանիշներով: Երկակի ստանդարտների կիրառումը դրսևորվել է, թե ըստ էության նույնաբովանդակ խախտումների դեպքում տարբեր, որոշ դեպքերում ակնհայտորեն անհամաչափ կարգապահական տույժեր կիրառելիս և թե կարգապահական պատասխանատվության էականորեն տարբերվող հիմքերի պարագայում՝ դատավորների նկատմամբ նույն տեսակի կարգապահական տույժը ընտրելիս: Կարգապահական պատասխանատվության կիրառման ընթացքում Խորհրդի կողմից դրսևորված երկակի մոտեցումները հաճախ պայմանավորված են եղել նաև կարգապահական վարույթ հարուցող մարմնի հանգամանքով. սույն զեկույցում ներկայացված գործերով, որոնցով կարգապահական վարույթը հարուցվել է ՀՀ Արդարադատության նախարարի կողմից<sup>41</sup>, դատավորի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժի շատ ավելի մեղմ տեսակը՝ համանման խախտումներով կարգապահական հանձնաժողովի կողմից վարույթը հարուցված լինելու դեպքում կիրառված տույժերի համեմատությամբ:

**13. Արդարադատության խորհրդի որոշումների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում խնդրահարույց է ոչ միայն դատավորի կողմից թույլ տրված խախտման որակումը որպես ակնհայտ և կոպիտ, այլև խախտման առկայությունն ընդհանրապես:**

<sup>41</sup> Թիվ ԱԽ-2-Ո-11(22.01.2009թ.), ԱԽ-24-Ո-29 (07.12.2012թ.) որոշումներ:



1. ՀՀ արդարադատության խորհրդի 2009թ. փետրվարի 5-ի թիվ ԱԽ-3-Ո-14 որոշմամբ ՀՀ վարչական դատարանի դատավոր Ա. Պողոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Խորհրդի որոշմամբ արձանագրվել է. «ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Ա. Պողոսյան), խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, քննության է առել վարչական գործն ըստ հայցի՝ Արմինե Աբրոյանն ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Արարատի մարզի Սասիսի տարածքային ստորաբաժանման,... անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու, Արմինե Աբրոյանի սեփականության իրավունքը Արարատի մարզ, գ. Այնթափ, 7-րդ փողոց, թիվ 32, 194,7 քմ մակերեսով տան և 0,065 հա տնամերձ հողամասի նկատմամբ գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Արդյունքում, ՀՀ վարչական դատարանը Արմինե Աբրոյանի հայցը բավարարել է ամբողջությամբ: *Մինչդեռ ՀՀ վարչական դատարանը անտեսել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը...»:* Բավարար է միայն արձանագրել, որ վկայակոչված՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճիռը, որը «անտեսվել է» Վարչական դատարանի դատավոր Ա. Պողոսյանի կողմից, ընդհանրապես որևէ առնչություն չունի քննված գործով ներկայացված հայցի հիմքերի հետ:

2. ՀՀ արդարադատության խորհրդի 2010թ. հունիսի 11-ի թիվ ԱԽ-10-Ո-10 որոշմամբ ՀՀ վարչական դատարանի դատավոր Ա. Միրզոյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության ՀՀ դատական օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով: Կարգապահական պատասխանատվության համար, ըստ էության, հիմք է հանդիսացել դատավոր Ա. Միրզոյանի կողմից գործի փաստերի և ապացույցների գնահատումը: Արդարադատության խորհուրդը նշել է, որ «...Սույն գործով Դատարանը, որպես գործի լուծման համար վճռական նշանակություն ունեցող ապացույց, ընդունել է Ք. Սուլթանյանի՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքին հասցեագրված դիմումի վրա ուղղման ձևով ամսաթիվը, այն է՝ «10.07.12.2006թ.», որն ինքնին Դատարանի մոտ պետք է հարց առաջացներ նշված ապացույցի՝ հիշատակված ամսաթվի մասով ճշմարիտ տեղեկատվություն պարունակելու հանգամանքի վերաբերյալ: Սակայն նման պարագայում էլ Վարչական դատարանը չի կատարել գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, որի արդյունքում սխալ է գնահատել գործում եղած ապացույցները, որն էլ, իր հերթին, հանգեցրել է Դատարանի կողմից չհիմնավորված և ակնհայտ ապօրինի դատական ակտի կայացմանը...»: (թիվ ԱԽ-10-Ո-10/2010

որոշումից:) Խորհուրդը իր որոշումը պատճառաբանել է նաև հետևյալով. Կտակի դարձերեսին առկա մակագրությունը կատարված է 10.11.2005 թվականին, իսկ Երևանի Մալաթիա-Մեքաստիա թաղամասի «Լիլիա» համատիրության երկու տեղեկանքները՝ նոտարական գրասենյակ ներկայացնելու համար, տրվել են 29.11.2005 թվականին: Այսինքն, նշված փաստաթղթերը Քրիստինե Սուլթանյանը ձեռք է բերել ժառանգությունն ընդունելու հարցը կարգավորելու համար, իսկ ժառանգության ընդունման դիմումը թվագրված է 02.12.2005 թվականով: Ավելին, Քրիստինե Սուլթանյանի կողմից ժառանգության բացման վայրի նոտարին հանձնված դիմումի վրա ի սկզբանե գրված է եղել 02.12.2005 ամսաթիվը, որը ձեռագիր եղանակով փոփոխվել է և գրվել է «10.07.12.2006թ.»:

Չանդրադառնալով Խորհրդի կողմից բերված փաստարկների իրավաչափության հարցին՝ արձանագրենք միայն, որ կարգապահական պատասխանատվության հիմքում դրվել է դատավորի կողմից ապացույցների սխալ գնահատման հանգամանքը: Մինչդեռ, ԵԽ նախարարների կոմիտեի դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին թիվ CM/Rec(2010)12 հանձնարարականի համաձայն՝ օրենքի մեկնաբանությունը, փաստերի կամ ապացույցների գնահատումը չեն կարող հանգեցնել քաղաքացիական կամ կարգապահական պատասխանատվության՝ բացառությամբ դիտավորության կամ կոպիտ անփութության դեպքերի: Նույն դրույթն ամրագրվել է նաև Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում: Ավելին, Արդարադատության խորհրդի N ԱԽ-3-Ո-8/2008 որոշմամբ արձանագրվել է. «...նույն կարգապահական վարույթի ընթացքում քննարկման առարկա են դարձել ապացույցների գնահատման ոլորտը, փաստերի առկայության կամ բացակայության մասին եզրակացությունների օրինականությունը, ինչը զուտ դատական գործառույթ է և դուրս է դատավորի նկատմամբ կարգապահական իշխանության տիրույթից»:

**14. Արդարադատության խորհուրդը որդեգրել է անընդունելի քաղաքականություն՝ նույն դատավորի կողմից նույնանման խախտումներ թույլ տալու դեպքում կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ, եթե դատավորն արդեն իսկ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:**

Այսպես, ՀՀ ԱԽ կարգապահական հանձնաժողովին ուղղված քաղաքացի Գ. Մարտիրոսյանի 10.04.2012թ. դիմումի ուսումնասիրության արդյունքներով Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը գտել է, որ տվյալ դեպքում կարգապահական հանձնաժողովը պետք է օգտվի

կարգապահական վարույթ չհարուցելու իր իրավասությունից, քանի որ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ա. Հովսեփյանը դիմումում նշված նույնանման խախտումների համար, որոնք կատարվել են նույն ժամանակահատվածում, Արդարադատության խորհրդի 30.09.2011թ. որոշմամբ արդեն իսկ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Փաստաբան Տ. Մուրադյանի 14.02.2013թ. Արդարադատության խորհուրդ ներկայացված դիմումի ուսումնասիրության արդյունքում կարգապահական վարույթ չի հարուցվել, քանի որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Ռ. Ներսիսյանը դիմումում նշված նույնանման խախտման համար Արդարադատության խորհրդի 31.01.2013թ. որոշմամբ արդեն իսկ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Նույնանման խախտման համար կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հետևանքով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու պատճառաբանությունը ՀՀ դատական օրենսգրքով սահմանված չէ որպես կարգապահական վարույթ չհարուցելու հիմք:

#### IV. Արձանագրված խախտումները և երկակի ստանդարտները Վճռաբեկ դատարանում

ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի գործառույթն է նաև ընդհանուր և մասնագիտացված ստորադաս դատարանների թույլ տված դատական սխալներն իր իրավասության շրջանակներում ուղղելը:

Վճռաբեկ դատարանն ունի երկու պալատ՝ քրեական պալատ և քաղաքացիական ու վարչական պալատ: Վճռաբեկ դատարանը կազմված է վճռաբեկ դատարանի նախագահից, երկու պալատների նախագահներից և տասնչորս դատավորից: Վճռաբեկ բողոք բերելու համար հիմքերից մեկը դատական սխալն է, այսինքն՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա<sup>42</sup>:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից հիմնական խախտումները, երկակի ստանդարտները և իրավական կամայականությունները կատարվում են բողոքները վարույթ ընդունելու փուլում: Դա էլ իր հերթին հնարավոր է դառնում, քանի որ Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելու փուլում խախտում է բողոքը վերադարձնելու մասին որոշումները պատճառաբանելու օրենքի հստակ պահանջը: Չնայած՝ ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասում հստակ սահմանված է, որ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների պատճառաբանման պահանջը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընկալվում է համապատասխան ընդունելիության հիմքի և օրենսդրական դրույթների ձևական վկայակոչման մակարդակում:

---

<sup>42</sup> Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է քննության, եթե վճռաբեկ դատարանի կարծիքով բողոքում հիմնավորված է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ վերանայվող դատական ակտը առերևույթ (prima facie) հակասում է Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին, կամ ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, կամ եթե առկա են նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ:

ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է պալատի նախագահի և երեք կամ հինգ դատավորի կազմով (դատավորների թիվը ըստ պալատի): Ներկայացված վճռաբեկ բողոքների ճնշող մեծամասնությունը Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չեն ընդունվում: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ 2012թ. ընթացքում ստացվել է 2928 վճռաբեկ բողոք: Մակագրված 2733 բողոքներից 2474-ը (90.5 %) վերադարձվել է: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից ներկայացված բողոքներից վերադարձվել է 1007-ը կամ 88.1%-ը, 58-ը կամ 5.07% -ը՝ թողնվել է առանց քննության, իսկ վարույթ է ընդունվել 76 բողոք կամ 6.6%-ը:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պահանջն ամրագրող դրույթներ սահմանված են ՀՀ քաղաքացիական, քրեական և վարչական դատավարության օրենսգրքերում: Այս դրույթները սահմանվել են ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումների, այդ թվում՝ 2007թ. Ապրիլի 9-ի ՍԴՈ-690, 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765, 2007թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-691, 2009թ. հուլիսի 28-ի ՍԴՈ-818 որոշումների կատարման ապահովման նպատակով: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշմամբ<sup>43</sup> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 231.1. հոդվածի (2006թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) 2-րդ կետը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար, նաև՝ արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով: Նույն հիմնավորումներով ՀՀ սահմանադրական դատարանը 2007թ. ապրիլի 11-ի ՍԴՈ-691 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1 հոդվածի 2-րդ

---

<sup>43</sup> Սահմանադրական դատարանի գնահատմամբ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանվածության վերաբերյալ նորմատիվ պահանջը կարևոր երաշխիք է ինչպես արդարադատության մատչելիությունը, այնպես էլ անձանց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության արդյունավետությունն ապահովելու համար: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 2-րդ կետի դրույթները հստակ չնախատեսելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու պատճառաբանման պահանջ, չեն կարող երաշխավորել անձի՝ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

մասը՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու առումով:

Մինչև ՀՀ սահմանադրական դատարանի կողմից վերոգրյալ որոշումների ընդունումը ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումները հիմնականում պատճառաբանում էր բողոքի ընդունելիության հիմքերի բացակայությամբ: Հենց այս պատճառաբանությամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներն են հիմք հանդիսացել համապատասխան անձանց կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար, որի արդյունքում ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի նշված դրույթները ճանաչվել են հակասահմանադրական: Ուսումնասիրելով Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-690 որոշմամբ շեշտել է, որ բողոքը վերադարձնելու պատճառաբանման նորմատիվ պահանջի բացակայության հետևանք է, որ ուսումնասիրված՝ վճռաբեկ դատարանի թե՛ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու և թե՛ վերադարձնելու մասին որոշումներում ըստ էության չեն տրվում պատճառաբանություններ:

Այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումները, դրանց հիման վրա ՀՀ դատական օրենսգրքում, քրեական, քաղաքացիական, վարչական դատավարության օրենսգրքերում կատարված փոփոխություններն իրավակիրառ պրակտիկայում այդպես էլ էական փոփոխությունների չհանգեցրեցին: ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներն ու դրանցում արտահայտված դիրքորոշումներն ըստ էության Վճռաբեկ դատարանի կողմից չկիրառվեցին՝ որոշումը պատճառաբանելու պահանջի նկատմամբ դրսևորվելով ձևական մոտեցում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2012թ. նոյեմբերի 29-ի՝ ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացվող բողոքների ընդունելիությանն առնչվող խնդիրների վերաբերյալ եզրակացությամբ ներկայացվել է միջազգային փորձը բարձրագույն դատական ատյանի կողմից բողոքի ընդունելիության մերժման վերաբերյալ որոշումների պատճառաբանման ծավալի վերաբերյալ: Մասնավորապես, շեշտվել է, որ այն դեպքերում, երբ պատճառաբանված որոշման ընդունման պահանջը հստակ սահմանված չէ օրենսդրությամբ, ինչը ենթադրում է, որ որոշման պատճառաբանումը անհրաժեշտ չէ, բարձրագույն ատյանի դատարանները տարբեր լուծումներ են կիրառում այն հարցում, թե՛ ինչ աստիճանի մանրամասնությամբ պետք է կատարվի որոշման պատճառաբանումը: Բերվել են Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի

օրինակները, որտեղ հակիրճ և ընդհանրական նախադասություններ են օգտագործվում ոչ ընդունելի բողոքները մերժելու համար՝ դատավարական պատմության հակիրճ ներկայացումից հետո: Այնուամենայնիվ, նույն եզրակացությամբ հստակ շեշտվել է, որ «անկախ միջազգային պրակտիկայից, որը կարող է ավելի մեղմ պահանջներ առաջադրել, ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ դատական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով պարտավորված է կիրառել վերադարձնելու մասին որոշումը պատճառաբանելու առավել խիստ չափանիշներ և, այսպիսով, պարտավոր է պատճառաբանել իր որոշումները»: (Opinion-Nr.: JUD-ARM/212/2012(LB), OSCE/ODIHR, Warsaw, 29 November 2012): Եզրակացությամբ ներկայացվել են նաև հատուկ առաջարկներ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վերադարձնելու որոշումների պատճառաբանման չափանիշների սահմանման վերաբերյալ՝ կիրառելով Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 11 կարծիքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերի բացակայության վկայակոչմամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի տիպային պատճառաբանությունները բացառում են վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պահանջի ապահովումը՝ Վճռաբեկ դատարանի կողմից: Այս հետևությունը հաստատվում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 08.10.2008թ. թիվ ՄԴՈ-765 որոշմամբ: Այսպես, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ սահմանադրական դատարանի որոշման առկայության պայմաններում ՀՀ Ազգային ժողովն օժտված չէ վճռաբեկ բողոքը վերադարձնելու հիմքերից որևէ մեկը արտոնյալ վիճակում դնելու հայեցողությամբ և չի կարող սահմանել, որ այդ հիմքի վկայակոչումն «ինքնաբավ է», ու դրա առկայության հիմնավորման կարիք չկա: Ուստի, անկախ նրանից, թե օրենսդիրը վճռաբեկ բողոքի ընդունելիության ինչ հիմքեր կսահմանի, դրանցից բոլորը և յուրաքանչյուրը ենթակա են պատճառաբանման: Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների պատճառաբանման պահանջը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընկալվում է համապատասխան ընդունելիության հիմքի ձևական վկայակոչման մակարդակում, քանի որ դրա բացակայությունն ըստ էության չի պատճառաբանվում:

Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների պատճառաբանման պահանջը անմիջականորեն պայմանավորված է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու որոշումների պատճառաբանման և, ընդհանրապես, Վճռաբեկ դատարանի կողմից բողոքի ընդունելիության հիմքերի կիրառման

չափանիշներով: Այս չափանիշները դեռևս 2007թ.-ից սահմանվել են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով. «Վճռաբեկ դատարանը, գործելով իր սահմանադրաիրավական գործառույթի շրջանակներում, պարտավոր է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ մեկնաբանել «Էական նշանակություն», «ծանր հետևանք», «վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտ» հասկացությունների օրենսդրական բովանդակությունը՝ հնարավորություն տալով իրավունքի սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները» (28.07.2009թ. ՄԴՈ-818): «Վճռաբեկ դատարանի կողմից «Էական նշանակություն», «ծանր հետևանք» և «Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված դատական ակտ» արտահայտությունների՝ դատական գործերի հանգամանքներից բխող բովանդակային հստակեցումը, մեկնաբանումը, պատճառաբանումը պայման է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին կետի 4.1 ենթակետում և 231.2 հոդվածի 1-ին կետում նախանշված հիմքերին համապատասխան՝ վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունը կանխատեսելի դարձնելու համար»(ՄԴՈ-690, 09.04.2007թ.):

Ինչ վերաբերում է «ծանր հետևանք» առաջացնելու հիմքով ներկայացված և վարույթ ընդունված վճռաբեկ բողոքներին, ապա այստեղ, առավել ևս, հնարավոր չէ որևէ հետևություն կատարել Վճռաբեկ դատարանի կողմից այս բողոքների ընտրության չափանիշների մասին, քանի որ մինչ օրս «ծանր հետևանք» հասկացության բովանդակությունը բացահայտված չէ: Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված մի շարք բողոքներում, որպես ծանր հետևանք, նշվում է, օրինակ, սեփականության իրավունքի զրկման կամ սահմանափակման, դատական սխալի հետևանքով բողոք բերող անձի կամ նրա ընտանիքի կողմից անօթևան մնալու վտանգի, անձի ազատության անհիմն սահմանափակման, անհիմն դատապարտման վերաբերյալ հիմնավորումներ: Նույնաբովանդակ հիմնավորումներ բերվում են նաև բազմաթիվ այլ վճռաբեկ բողոքներում, որոնք Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ չեն ընդունվում:

«Ծանր հետևանք» հասկացությունը պարզաբանելու առաջարկը ներկայացվել է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2012թ. նոյեմբերի 29-ի՝ ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացվող բողոքների ընդունելիությանն առնչվող խնդիրների վերաբերյալ եզրակացությամբ: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բողոքի ընդունելիության «ծանր հետևանք»-ի վերաբերյալ հիմքի համատեքստում զուգահեռ է տարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կիրառվող «Էական վնաս»-ի ընդունելիության չափանիշի հետ: Արձանագրվել է, որ թեև «Էական



վնաս» հասկացությունը կարող է առաջին հայացքից անորոշ թվալ, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում տրվել է այս հասկացության մեկնաբանությունը<sup>44</sup>: Դատարանը միակ իրավասու մարմինն է, որը մեկնաբանում է նոր ընդունելիության պահանջը և որոշում է կայացնում գանգատի վերաբերյալ: Ուժի մեջ մտնելուց հետո առաջին երկու տարիների ընթացքում այս չափանիշի կիրառումը դրվել է Պալատների և Մեծ Պալատի վրա (Թիվ 14 Արձանագրության հոդված 20§2), որոնք պետք է սահմանեին հստակ նախադեպային սկզբունքները՝ կոնկրետ համատեքստերում օգտագործվելու համար<sup>45</sup>:

Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից մինչ օրս չեն մեկնաբանվել վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերում ներառված խնդրո առարկա հասկացությունները, բոլորովին անորոշ է մնում «ծանր հետևանք» հասկացությունը, որը պարարտ հող է ստեղծում Վճռաբեկ դատարանի լիազորությունների կամայական իրականացման համար:

«ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման անհրաժեշտության մասին հիմնավորման մեջ (Նախագիծ Կ-288-18.06.2013-ՊԻ-010/0, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն) արձանագրվել է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները Վճռաբեկ դատարանի կողմից ընդհանրապես չեն պատճառաբանվում: Վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերում, որպես կանոն, չի պատճառաբանում, թե ինչ հիմքով և պատճառաբանությամբ է Վճռաբեկ դատարանը կոնկրետ բողոքը ընդունել վարույթ: Նշված կարգավորումը դատավարության մասնակիցներին կարող է բերել այն եզրահանգման, որ Վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքները վարույթ է ընդունում կամայականորեն՝ վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պայմաններում կամ առանց վարույթ ընդունելու հիմքերի հարցի լուծման<sup>46</sup>:

<sup>44</sup> Opinion-Nr.: JUD-ARM/212/2012(LB), OSCE/ODIHR, Warsaw, 29 November 2012:

<sup>45</sup> Ընդունելիության չափանիշների վերաբերյալ գործնական ուղեցույց, Եվրոպայի Խորհուրդ/Մարդու Իրավունքների Եվրոպական դատարան, 2011թ.:

<sup>46</sup> Հիմնավորում «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ

Վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերի հստակեցված չլինելու պայմաններում տիպային պատճառաբանություններ պարունակող վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներ կայացնելու հետևանքով՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից խախտվում են թե՛ ՀՀ օրենսդրության, և թե՛ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների պահանջները: Նման պայմաններում լիովին արդարացված է հանրության շրջանում առկա անվստահությունը Վճռաբեկ դատարանի գործունեության նկատմամբ: Վճռաբեկ դատարանի լիազորությունների կամայական իրականացման, երկակի ստանդարտների կիրառման և որոշումների անկանխատեսելիության վերաբերյալ հետևությունը պայմանավորված է բողոքի ընդունելիության հիմքերի հստակեցված չլինելու պայմաններում այս որոշումները չպատճառաբանելու հանգամանքով, ինչը կամայական բնույթ է հաղորդում Վճռաբեկ դատարանի գործունեությանը: Մինչդեռ, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանման պայմանն օրենքով հստակ սահմանելը պետք է հանդիսանար Վճռաբեկ դատարանի կողմից իր հայեցողական լիազորության իրավաչափ և ոչ կամայական իրականացումն ապահովող կարևոր իրավական երաշխիք<sup>47</sup>:

***Վճռաբեկ դատարանի մեծամասնության կարծիքի հետ չհամաձայնող Վճռաբեկ դատարանի անդամն իրավունք ունի չստորագրելու դատական ակտը, սակայն այդ դեպքում պարտավոր է գրավոր շարադրել իր հատուկ կարծիքը: Մինչ օրս հայտնի չէ որևէ դեպք, երբ Վճռաբեկ դատարանի որևէ դատավորի կողմից ներկայացվի հատուկ կարծիք:***

Համապատասխան խմբավորմամբ ստորև ներկայացնում ենք Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի բացահայտ խախտումների, երկակի ստանդարտների և կամայականությունների նաև այլ դրսևորումներ:

---

կատարելու մասին», «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման անհրաժեշտության մասին, Նախագիծ Կ-288-18.06.2013-ՊԻ-010/0, Հեղինակ՝ ՀՀ կառավարություն. Նախագիծը՝ 09.09.2013թ. ընդգրկվել է ԱԺ չորսօրյա նիստերի օրակարգ:

<sup>47</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 27.05.2008թ. թիվ ՄԴՈ-754 որոշումը:

**1. Մի շարք դեպքերում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում քննարկվում են հարցեր, որոնք ենթակա են լուծման միայն գործի ըստ էության քննության ժամանակ:**

Այսպես, քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում հաճախ հանդիպում են հետևյալ ձևակերպումները. «Վերլուծելով բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ *գործի էլքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում*: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ<sup>48</sup>»:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմք է հանդիսանում դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի էլքի վրա:

Նույնաբնույթ ձևակերպումներ հաճախ հանդիպում են նաև քրեական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում. «Վերլուծելով բողոքի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ *գործի էլքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանք*: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ<sup>49</sup>»:

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում տեղ գտած վերոնշյալ ձևակերպումները վկայում են այն մասին, որ Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելու փուլում գնահատում է դատական սխալի առկայությունն

<sup>48</sup> Տե՛ս թիվ ԿԴ1/0495/02/12, ԱՎԴ/0587/02/12, ԵԱՔԴ/1066/02/11, ԱԸԴ1/0369/02/10, ԵԱԴԴ/1256/02/11, ՇԴ3/0305/02/10 քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

<sup>49</sup> Տե՛ս ԵԷԴ/0139/01/10, ԿԴ1/0061/01/12, ԼԴ/0192/01/11 քրեական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները:

ու գործի ելքի վրա դրա՝ ազդած լինելու հանգամանքը, ինչը ենթակա է հաստատման ՀՀ վճռաբեկ դատարանում դատաքննության փուլում:

Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին մի շարք որոշումներում Վճռաբեկ դատարանն անդրադառնում է վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի առկայության գնահատմանը Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների միջոցով: Մասնավորապես, որոշումներում տեղ են գտնում հետևյալ ձևակերպումները. «ՀՀ վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին բողոք բերած անձի հիմնավորումը հերքվում է Վերաքննիչ դատարանի որոշմամբ նշված պատճառաբանություններով...»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման<sup>50</sup>: Դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման<sup>51</sup>: Վերոգրյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ դատական սխալի առկայության կամ բացակայության հաստատումը հանդիսանում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտի բեկանման հիմք, հետևաբար՝ ենթակա է հաստատման՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո գործն ըստ էության լուծելու փուլում: Նույն հիմնավորումները կիրառելի են նաև քրեական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի բողոքը վերադարձնելու մասին որոշումների նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում, հաճախ մեջ է բերվում հետևյալ պարբերությունը. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի (գանգատ 32283/04) գործով 17.06.2008 թվականի վճռով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանության վերաբերյալ արտահայտել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ: Նման հանգամանքներում չի կարելի ասել, որ Վճռաբեկ դատարանը չէր նշել հիմնավորում միայն այն պատճառով, որ այն հաստատել էր ավելի ցածր

<sup>50</sup> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, հոդված 227, 2-րդ մաս:

<sup>51</sup> ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, հոդված 228, 1-ին մաս:

ատյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ»:

«Մելտեքս» ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսիսյանն ընդդեմ Հայաստանի գործին կատարված հղումները Վճռաբեկ դատարանի որոշումներում ևս մեկ անգամ հաստատում են, որ Վճռաբեկ դատարանը շփոթում է բողոքի ընդունելիության հիմքը դատական ակտի բեկանման հիմքի հետ, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի մեջբերվող հատվածը վերաբերել է Վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտին: Իսկ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու կամ վերադարձնելու մասին որոշումների ընդունման հնարավորությունը նույնիսկ նախատեսված չէր այդ ժամանակահատվածում գործող օրենսդրությամբ:

Համանման ձևակերպումներ հաճախ հանդիպում են նաև վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում, որտեղ դատական սխալի առկայությունը հերքվում է Վերաքննիչ դատարանի համապատասխան պատճառաբանություններով: Ընդ որում, ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. ապրիլի 13-ի թիվ ՍԴՌ-873 որոշմամբ ամրագրված դիրքորոշումները մեծ մասամբ կիրառելի են նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններից հետո ձևավորված իրավակիրառ պրակտիկայի նկատմամբ: Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ թույլատրելիության հարցի լուծման ժամանակ բուն արդարադատության կանխորոշումը իմաստագրկում է դրա արդյունավետությունը, իսկ բողոքի թույլատրելիության հիմքը շփոթվում է Վարչական դատարանի ակտի բեկանման հիմքի հետ, և որ արդարադատության նման ձևականացումն անհամատեղելի է դրա սահմանադրական իմաստի հետ:

- 2. Վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանը հաճախ բողոքը վերադարձնելու մասին որոշումներում բողոքը վարույթ չընդունելը պատճառաբանում է բողոքի ընդունելիության հիմքերը բավարար հիմնավորված չլինելու հանգամանքով, այնինչ, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, բողոք բերող անձի համար նման հիմնավորման պարտականություն ընդհանրապես նախատեսված չէ:**

Օրինակ՝ Վճռաբեկ դատարանի կոմից հաճախ օգտագործվում է վարույթ չընդունելու տիպային պատասխան. «Վերլուծելով բողոք բերած անձի փաստարկները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ

դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ»:

Մինչդեռ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով՝ վճռաբեկ բողոք բերող անձի համար սահմանված չէ վճռաբեկ բողոքում ընդունելիության հիմքերի վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու պարտականությունը: Վճռաբեկ դատարանը կարող է վերադարձնել բողոքը, եթե գտնում է, որ բացակայում են սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը: Այսինքն, համապատասխան բողոքում ընդունելիության հիմքերի բացակայությունը կամ առկայությունը գնահատում է Վճռաբեկ դատարանը՝ անկախ բողոքը քննության ընդունելու հիմքերի վերաբերյալ հիմնավորումների առկայությունից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հիմնավորումներով, և բողոքում համապատասխան ընդունելիության հիմքի վերաբերյալ փաստարկների ոչ բավարար հիմնավորվածության կամ նույնիսկ բողոքում հիմնավորման բացակայությամբ չի կարող պատճառաբանել բողոքը վերադարձնելու մասին որոշումը:

- 3. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2012-2013թթ. վարույթ ընդունված բոլոր բողոքների ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված 9 բողոքներ ընդհանրապես չեն պարունակել վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերի վերաբերյալ որևէ հղում կամ հիմնավորում, այսինքն՝ դրանք Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ են ընդունվել ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի պահանջների ակնհայտ խախտմամբ: Այս բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունելու փաստն ապացուցում է ոչ միայն Վճռաբեկ դատարանի կողմից օրենքով սահմանված պահանջների ուղղակի խախտումը, այլև՝ Վճռաբեկ դատարանի կողմից երկակի ստանդարտների ակնհայտ կիրառումը՝ վարույթ չընդունված մի քանի հազար բողոքներ ներկայացրած անձանց նկատմամբ:**

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածով սահմանված են Վճռաբեկ բողոքի բովանդակությանն առնչվող պահանջները: Վճռաբեկ բողոքը պետք է ներառի վճռաբեկ բողոքի

ընդունելիության հիմքերից որևէ մեկի հիմնավորումները:<sup>52</sup> ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՄԴՈ-690 որոշմամբ անդրադարձել է վճռաբեկ բողոքի բովանդակությանն առնչվող պահանջներին և դրանց չպահպանման իրավական հետևանքներին: Այսպես, որոշմամբ արձանագրվել է, որ օրենսդրորեն հստակեցված են իրավական այն պայմանները, որոնց առկայության դեպքում է միայն իրավասու սուբյեկտի դիմումը ճանաչվում իրավաչափ, և այն սահմանված կարգով ներկայացվելու ձևով կամաարտահայտման արդյունքում է միայն Վճռաբեկ դատարանն իրավասու գործադրել սահմանադրաիրավական կարգավիճակից բխող օրենսդրական իր լիազորությունները: Հստակեցվել են նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորությունները:

«Վճռաբեկ դատարանը պարտավոր է վերադարձնել վճռաբեկ բողոքը, եթե այն չի համապատասխանում օրենսգրքում նախանշված բովանդակային պահանջներին կամ չի պարունակում վճռաբեկ բողոքի ընդունելիության որևէ հիմքի հիմնավորում» (2007թ. ապրիլի 9-ի թիվ ՄԴՈ-690 որոշում): Վերոգրյալ դրույթների վերլուծությունից բխում է, որ բացի դատական սխալի վերաբերյալ հիմնավորումներից, վճռաբեկ բողոքը պետք է առանձին հիմնավորում պարունակի բողոքի ընդունելիության հիմքերի վերաբերյալ: Այսինքն, հիմնավորում այն մասին, թե այդ դատական սխալը ինչպիսի ծանր հետևանք է առաջացրել կամ կարող է առաջացնել, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումն ինչու և ինչպես կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, ինչպես է վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին: Այս հիմնավորումները չպարունակող բողոքները ՀՀ վճռաբեկ դատարանը իրավասու չէ ընդունելու վարույթ:

Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վճռաբեկ բողոք բերող անձի համար սահմանված չէ վճռաբեկ բողոքում ընդունելիության հիմքերի վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելու պարտականությունը: Վարչական դատավարության կարգով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար բողոքում բավարար է նշել միայն նյութական կամ

---

<sup>52</sup> Վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում սույն օրենսգրքի 231 հոդվածի և 234 հոդվածի 1-ին կետի պահանջներին: Նույնաբովանդակ դրույթներ սահմանված են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

դատավարական իրավունքի նորմերի խախտման կամ սխալ կիրառման հիմնավորումները: Իսկ Վճռաբեկ դատարանը կարող է վերադարձնել բողոքը, եթե գտնում է, որ բացակայում են սույն օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը: Այսինքն, համապատասխան բողոքում ընդունելիության հիմքերի բացակայությունը կամ առկայությունը գնահատում է Վճռաբեկ դատարանը՝ անկախ բողոքը քննության ընդունելու հիմքերի վերաբերյալ հիմնավորումների առկայությունից: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը կաշկանդված չէ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հիմնավորումներով:

Դրան զուգահեռաբար, մեր կողմից արձանագրվել են դեպքեր, երբ Վճռաբեկ դատարանը բողոքում ընդունելիության հիմքերի վերաբերյալ հիմնավորումների բացակայության հիմքով՝ առանց թերությունները վերացնելու համար ժամկետի սահմանման, վերադարձրել է նման վճռաբեկ բողոքները: Օրինակ՝ ԳԴ5/0004/01/12 քրեական գործով 2013թ. փետրվարի 27-ի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորումները: Վճռաբեկ բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ այն չի բովանդակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման»:

**4. Վարույթ ընդունված և վերադարձված վճռաբեկ բողոքների ուսումնասիրության արդյունքում հիմնականում հնարավոր չէ բացահայտել, թե ինչ չափանիշներով են վճռաբեկ բողոքներն ընդունվում վարույթ կամ վերադարձվում Վճռաբեկ դատարանի կողմից:**

Վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված մի շարք բողոքներ պարունակել են ընդամենը ձևական բնույթի հղումներ վճռաբեկ բողոքի ընդունելիության հիմքերին կամ հիմքերից երևե մեկին՝ առանց ըստ էության հիմնավորելու դրանց առկայությունը: Օրինակ, վճռաբեկ բողոքում նշվել է, որ վերանայվող դատական ակտը առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին՝ առանց Վճռաբեկ



դատարանի որևէ որոշում կամ դորքորոշում ներկայացնելու: Կամ նշվել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, սակայն չի բերվել որևէ հիմնավորում տվյալ հարցով օրենքի միատեսակ կիրառության անհրաժեշտության կամ դատարանների կողմից համապատասխան օրենքի նորմը տարբեր կերպ մեկնաբանելու և կիրառելու վերաբերյալ: Շատ դեպքերում նույնիսկ չեն հստակեցվել, թե կոնկրետ որ օրենքի նորմերի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի կողմից կայացվելիք դատական ակտը կարող է էական նշանակություն ունենալ:

Դրա հետ միասին մենք արձանագրել ենք մի շարք դեպքեր, երբ վճռաբեկ բողոքները պարունակել են հստակ մանրամասն հիմնավորումներ՝ կայացված դատական ակտի՝ Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշումներին հակասության, բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշման՝ օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու վերաբերյալ, սակայն այս բողոքները վերադարձվել են Վճռաբեկ դատարանի կողմից՝ առանց ըստ էության պատճառաբանելու բողոքի ընդունելիության հիմքերի բացակայությունը:

**Օրինակ 1.** Թիվ ԿԴ/0399/02/10 քաղաքացիական գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել գործով պատասխանող «Խելուցյանի Ջերմահեղուկներգործիմոնտաժային թիվ 1 ընկերություն»-ը, որը, դատական սխալի առկայությունը հիմնավորելուց բացի, ներկայացրել է առանձին հիմնավորումներ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ: Մասնավորապես, «Ելնելով սույն վճռաբեկ բողոքի 3-րդ բաժնում նշված Վերաքննիչ դատարանի որոշման մեջ թույլ տված խախտումներից, գտնում ենք, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ միայն սույն գործի շրջանակներում ստորադաս դատարանների կողմից վեճի լուծման համար կայացվել են միմյանց հակասող, իրարամերժ վճիռներ և որոշումներ, վնասի առկայության (վնասի չափի) անհայտ լինելու պայմաններում՝ կայացվել են վնասի փոխհատուցման՝ թե՛ բնեղենով, և թե՛ իրական վնասի հատուցման վճիռներ և որոշումներ, Վերաքննիչ դատարանը ակնհայտ կերպով դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից: Վերաքննիչ դատարանի որոշումն առերևույթ (prima facie) հակասում է Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին, մասնավորապես՝ 2009թ. փետրվարի 13-ի Նատալյա Հակոբյանն ընդդեմ

Վարդան Հայրապետյանի՝ վնասի հատուցման պահանջի մասին գործով թիվ ՀՔԴ 3/0016/02/08 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը, ինչպես նաև՝ Վճռաբեկ դատարանի 29.06.2012 թ. թիվ ԵԿԴ /2082/02/08 որոշմանը ...»:

Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վերադարձվել է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վերլուծելով բողոք բերած անձանց փաստարկները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով բողոքը վարույթ ընդունելու կապակցությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք բավարար չեն եզրահանգելու, որ վճռաբեկ բողոքում նշված որոշման հիմնավորումները կիրառելի են սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ: Հետևաբար՝ բերված բողոքում նշված հիմքը հիմնավորված չէ: Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ բողոք բերած անձանց փաստարկները բավարար չեն եզրահանգելու, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ գործի ելքի վրա ազդած դատական սխալ՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտում: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքը նույնպես հիմնավորված չէ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի և 234-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջին համապատասխան, այն ենթակա է վերադարձման... »:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ որոշումից ակնհայտ է, որ Վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքի հիման վրա գնահատել է գործի ելքի վրա ազդած դատական սխալի առկայությունը և եզրակացրել է, որ այն առկա չէ: Մինչդեռ, դատական սխալի և դրա՝ գործի ելքի վրա ազդելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանն իրավասու էր պարզելու և գնահատելու միայն բողոքը վարույթ ընդունելուց հետո՝ գործի՝ ըստ էության քննություն իրականացնելու արդյունքում: Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բողոքը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի պահանջներին, այն դեպքում, երբ վճռաբեկ բողոքը պարունակել է հիմնավորումներ՝ թե՛

դատական սխալի, և թե՛ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու վերաբերյալ:

**Օրինակ 2.** Թիվ ԵԿԴ/0196/06/13 գործով վճռաբեկ բողոք բերած անձի կողմից, բացի դատական սխալի հիմնավորումների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ կիրառելի նախադեպային իրավունքի վերլուծությունից, բերվել են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հետևյալ հիմնավորումները. «Գտնում եմ, որ սույն բողոքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից կայացվելիք որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Մասնավորապես, մեկնաբանման է ենթակա այն հանգամանքը, թե կարող է արդյոք կալանավորման, իսկ հետագայում նաև՝ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, ինչպես նաև գրավ չկիրառելու միակ հիմքը հանդիսանալ անձի՝ ծանր հանցագործության մեջ մեղադրվելու հանգամանքը: Նաև գտնում եմ, որ Վճռաբեկ դատարանի 31.10.2008թ. թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը դատարանները սույն գործով ճիշտ չեն մեկնաբանել և կիրառել: Մասնավորապես, դատարաններն այդ որոշումն ընկալել են այնպես, որ գրավ չկիրառելու համար բավարար է ուղղակի մատնանշել անձին կալանավորելու հիմքերը՝ առանց մանրամասնելու, թե այդ հիմքերի առկայությունը կոնկրետ դեպքում ինչու է բացառում գրավի կիրառումը»:

Վճռաբեկ բողոքը վերադարձվել է տիպային պատճառաբանությամբ:

**Օրինակ 3.** Թիվ ԵԿԴ/0099/11/12 գործով Վերաքննիչ դատարանի 17.08.2012թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք բերող անձի կողմից ներկայացվել են բողոքը վարույթ ընդունելու հետևյալ հիմնավորումները. «Գտնում եմ, որ ստորադաս դատարանի որոշումն անօրինական է, անհիմն է և ենթակա է բեկանման հետևյալ պատճառաբանությամբ՝ Վճռաբեկ դատարանը վերլուծել է Վալերի Գրիգորյանի վերաբերյալ որոշումը և հետևյալ իրավական դիրքորոշումն է ձևավորել. «(...) եթե քրեական դատավարության օրենսգրքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չէ, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են մարդու իրավունքները և օրինական շահերը, ապա ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով, դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման (տես՝ Վալերի Գրիգորյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2008թ. հուլիսի 25-ի թիվ ԵԿԴ/0031/11/08 որոշման 12-

րդ 14-րդ կետը)»: Վարուժան Մանուկյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ մինչդատական վարույթում իրավական պաշտպանության միջոցների համարժեքությունը գնահատելիս՝ ի թիվս այլ հանգամանքների, անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՀ-ում գործող քրեական դատավարության ձևը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մինչդատական վարույթի համար նախատեսված դատավարական ձևը, մասնավորապես՝ մինչդատական վարույթում ձեռք բերված տվյալների՝ օրենքով որպես ապացույց համարվելը, մինչդատական վարույթի մանրամասն և համակողմանի օրենսդրական կանոնակարգումը, այդ թվում՝ նշված փուլում ապացույցների ձեռք բերման եղանակների և ընթացակարգի մանրակրկիտ կարգավորումը և այդ համատեքստում քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռումն ինքնին սահմանափակում են մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմնի յուրաքանչյուր որոշման կամ գործողության դատական բողոքարկման շրջանակը: Մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթական են նախնական քննության մարմինների այն որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ինչը, սակայն, չի նշանակում, որ քրեական դատավարության այս փուլում դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումների շրջանակն անսահմանափակ է: Գործի նախնական քննության փուլում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված որոշումներից գատ, դատարան կարող են բողոքարկվել քրեական հետապնդման մարմինների այն որոշումներն ու գործողությունները (անգործությունը), որոնց բողոքարկումը դատավարության ավելի ուշ փուլում՝ դատարանում գործն ըստ էության քննելիս, անհնար է կամ այն կհանգեցնի անձի իրավունքների և օրինական շահերի անհամարժեք սահմանափակման (տես՝ Վարուժան Մանուկյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 05.11.2012 թ. թիվ ԵԿԴ/0060/11/10 որոշման 15-րդ և 16-րդ կետերը): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի քննությունը դատարանում կատարվում է միայն ամբաստանյալի նկատմամբ և միայն այն մեղադրանքի սահմաններում, որով նրան մեղադրանք է առաջադրվել: Վերը նշված նորմի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների վերլուծությունները ցույց է տալիս, որ քրեական գործն ըստ էության քննող դատարանը իրավասու է միայն լուծում տալու դատախազին բերված բողոքի և սույն բողոքի 4-րդ կետի «b» և «c» ենթակետերում նշված խնդրանքները, և իրավասու չէ պատասխանել այն հարցին, թե արդյոք Մամիկոն

Ստեփանյանը ձերբակալվել է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված՝ ազատության և անձնական անձոնմխելիության իրավունքի խախտմամբ, հետևապես նաև ճանաչել այդ իրավունքի խախտումը (սույն բողոքի 4-րդ կետի «ա» ենթակետ): Այսպիսով, վերը նշված փաստարկներից հետևում է, որ ստորադաս դատարաններն իրավասու չէին բողոքն ամբողջությամբ մերժել, քանի որ դրանում բարձրացված հարցերից երկուսի լուծումը Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից անհնար էր: Դրանից հետևում է, որ ստորադաս դատարանի որոշումը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածին և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վերը նշված որոշումներով հայտնած իրավական դիրքորոշմանը: Այսպիսով, ստորադաս դատարանի կողմից կայացված որոշումն առերևույթ հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2008թ. հուլիսի 25-ի ԵԿԴ/0031/11/08 «Վալերի Գրիգորյանի վերաբերյալ գործ» և 2010թ. նոյեմբերի 5-ի ԵԿԴ/0060/11/10 «Վարուժան Մանուկյանի վերաբերյալ գործ» որոշումներին: Բողոքը վերադարձվել է Վճռաբեկ դատարանի կողմից տիպային պատճառաբանությամբ:

Արձանագրենք, որ մի շարք դեպքերում Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձված գործերը հետագայում վարույթ են ընդունվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից, քանի որ գանգատում առկա խախտման մասին պնդումները Եվրոպական դատարանի կողմից համարվել են հիմնավոր:

**5. Վճռաբեկ դատարանը հիմնականում ձևական մոտեցում է դրսևորում Սահմանադրական դատարանի որոշումների, և դրանցում արտահայտված դիրքորոշումների նկատմամբ՝ ըստ էության չկատարելով Սահմանադրական դատարանի պարտադիր իրավաբանական ուժ ունեցող որոշումների պահանջները:**

Վճռաբեկ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու հիմքերից մեկը նոր երևան եկած կամ նոր հանգամանքների առկայությունն է: Նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը տվյալ քաղաքացիական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ գտել է, որ այդ դրույթը կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

Սահմանադրական դատարանի կողմից Դատական դեպարտամենտից պահանջվել է նոր հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի՝ 2006 թվականից հետո քննության առած, առանց բացառության, բոլոր գործերով ընդունած որոշումները: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի ընդունած վերջին տարիների թվով շուրջ 150 որոշումների ուսումնասիրությունից հետևում է, որ քննած գործերի 92.3%-ի դեպքում պարզապես մերժվել է նոր հանգամանքների հիմքով գործի քննությունը, և բողոքները վերադարձվել են: Միայն 7.7%-ի դեպքում է նոր հանգամանքների հիմքով բողոքները բավարարվել՝ դրանց քննության ընդունումը մերժելու վերաբերյալ նախկինում կայացված դատական ակտերը վերանայելու գործընթաց սկսելու առումով: Սակայն, բոլոր դեպքերում, որևէ գործով վերջնական դատական ակտը չի վերանայվել<sup>53</sup>:

Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ ուսումնասիրված որոշումների կեսից ավելին Սահմանադրության գերակայության երաշխավորման առումով խնդրահարույց է և ձևավորել է իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքին ոչ համարժեք իրավակիրառական պրակտիկա: Սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011թ. ՍԴՌ-984 որոշման 7-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության՝ կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը»:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «Այն դեպքում, երբ դատարանները կխուսափեն օրենքի նորմերի պարզապես ձևական թվարկումից և օրենքի նորմի կիրառումն իրական բովանդակություն

---

<sup>53</sup> Տե՛ս նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2013թ. սեպտեմբերի 18-ի թիվ ՍԴՌ-1114 որոշումը:

կունենա, անխուսափելի կլինի գործն ամբողջությամբ վերանայելու արդյունքում նաև եզրափակիչ մասի բովանդակային վերանայումը»: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ. «... իրավաչափ նպատակ է հետապնդում վեճի առարկա դրույթով նախատեսվող լրացուցիչ պահանջը: Այն պետք է դիտարկել ոչ թե իրավունք կամ սուբյեկտիվ հայեցողություն՝ դատական ակտն անփոփոխ թողնելու համար, այլ նորմատիվ պարտադրանք՝ նման հնարավոր դեպքերում ծանրակշիռ փաստարկներով հիմնավորում ներկայացնելու համար:

Առանձին դեպքում ձևական մոտեցումը հանգեցրել է նրան, որ Վճռաբեկ դատարանի որոշման մեջ մեխանիկորեն վերարտադրվել է դիմողի կողմից թույլ տրված սխալը կամ վրիպակը: Օրինակ, 2012թ. հունվարի 11-ի ԵՄԴ /0644/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում է ՀՀ սահմանադրական դատարանի 15.11.2011թ. ՄԴՈ-897 որոշման հիման վրա նոր հանգամանքների հիմքով նախկին որոշումը վերանայելու հիմքերի բացակայության մասին, և բողոքի քննության ընդունումը մերժվում է այն պատճառաբանությամբ, որ «... բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում չեն հիմնավորել նոր հանգամանքի առկայությունը»: Այնինչ, Սահմանադրական դատարանի հիշյալ համարով որոշումն ընդունվել է 2010թ. հունիսի 22-ին և վերաբերում է միջազգային պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանադրականությունը<sup>54</sup>:

---

<sup>54</sup> 2008 թվականի հոկտեմբերի 21-ի ՄԴՈ-767 որոշման 9-րդ կետում սահմանադրական դատարանը ընդգծել է նաև, որ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման լիարժեք և արդյունավետ համակարգի առկայությունն էլ ավելի է կարևորվում քրեական դատավարության շրջանակներում, քանզի քրեական պատասխանատվություն նախատեսող դատական ակտերն անձի իրավունքների և ազատությունների փաստացի վիճակի վրա ազդեցության առումով ունեն առանձնակի նշանակություն, մասնավորապես՝ հաշվի առնելով անձի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու և դրանից բխող հետևանքների առկայության հանգամանքը: Սահմանադրական դատարանն իր՝ 15.07.2011թ. ՄԴՈ-984 որոշման 7-րդ կետում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի վերանայումը պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի բեկանմանը: Ինչ վերաբերում է բեկանման արդյունքում իրավասու մարմնի լիազորություններին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ պայմանավորված յուրաքանչյուր կոնկրետ գործի առանձնահատկություններով՝ տվյալ գործը կամ կարող է ուղարկվել նոր քննության՝ գործը քննած դատարան, կամ դատական ակտը բեկանած դատարանը կարող է փոփոխել բեկանված ակտը, եթե հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս առանց նոր քննության կայացնելու նոր դատական ակտ՝ հաշվի առնելով կիրառված իրավանորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված լինելու փաստը»:

Հարկ ենք համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա՝ նոր հանգամանքի հիմքով վճռաբեկ բողոք ներկայացնելու դեպքերում, նույնպես Վճռաբեկ դատարանի կողմից ցուցաբերվում է ձևական մոտեցում: Հայտնի չեն դեպքեր, երբ Եվրոպական դատարանի վճիռը դիմումատուի համար հանգեցրել է գործի ելքի փոփոխության, և դատական ակտի վերանայման արդյունքում դատական ակտը փոփոխվել է:

**6. Առանձին դեպքերում Վճռաբեկ դատարանը թույլ է տվել դատավարական օրենքի խախտում, այն է՝ ՀՀ վճռաբեկ դատարանը դուրս է եկել հայցի առարկայի շրջանակներից: Վճռաբեկ դատարանի 27.12.2011թ. որոշմամբ անվավեր է ճանաչվել մի վարչական ակտ, որն ընդհանրապես ընդգրկված չի եղել հայցի առարկայի մեջ:**

Այսպես, թիվ ՎԴ3/0150/05/10 վարչական գործով հայցի առարկան կազմել են հետևյալ պահանջները. «1. Պատասխանողի կողմից նվիրատվության պայմանագրից ծագող իր իրավունքների պետական գրանցման մերժումը՝ տրված 30.04.2010 թվականին թիվ 723 գրությամբ, ճանաչել անիրավաչափ և անվավեր: 2. Պարտավորեցնել պատասխանող ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանմանը՝ գրանցելու 23.03.2010թ. նոտարական հաստատում ստացած նվիրատվության պայմանագրից ծագող իր իրավունքները»:

Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2011թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ բեկանել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 07.06.2011թ. որոշումը և այն փոփոխել՝ հայցը բավարարել՝ ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալի 25.05.2010թ. թիվ ԱՄ/7-1/1610-10 գրությունը և պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արտաշատի տարածքային ստորաբաժանմանը՝ գրանցելու Կարապետ Խաչատրյանի, Խաչատուր Խաչատրյանի, Խաչատուր Կարապետի Խաչատրյանի լիազորությամբ՝ Կարապետ Խաչատուրի Խաչատրյանի և Դավիթ Արտակի Խաչատրյանի միջև կնքված և 23.03.2010թ. նոտարական վավերացում ստացած նվիրատվության պայմանագրից ծագող սեփականության իրավունքը:

Փաստորեն, Վճռաբեկ դատարանի կողմից ոչ իրավաչափ է ճանաչվել մի վարչական ակտ (ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Մուսայանի 25.05.2010թ. թիվ



ԱՄ/7-1/1610-10 գրությունը), որը հայցվորի կողմից սույն գործով չի վիճարկվել:

**7. ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտերում առանձին դեպքերում թույլ է տրվել երկակի ստանդարտների ակնհայտ կիրառում:**

Այսպես, թիվ ՎԴ/3275/05/09 գործի շրջանակներում, Վճռաբեկ դատարանը կայացրել է երկու միմյանց տրամազծորեն հակասող որոշումներ: ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշմամբ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» և «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպությունների հայցադիմումի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերջիններս ակնհայտորեն չունեն հայցադիմումում ներկայացված պահանջներով դատարան դիմելու իրավունք, քանի որ այդ հասարակական կազմակերպությունների իրավունքները, վիճարկվող պահանջներով, չեն խախտվել և չեն շոշափվել: ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 09.07.2009թ. որոշման դեմ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժվել է միևնույն պատճառաբանությամբ: Վճռաբեկ դատարանի 30.10.2009թ. որոշմամբ Կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել և փոփոխվել է ՀՀ վարչական դատարանի 28.07.2009թ. որոշման՝ Կազմակերպության բողոքը մերժելու մասը: Կազմակերպության բողոքը բավարարվել է: Որոշման՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության բողոքը մերժելու մասը, թողնվել է օրինական ուժի մեջ: Վճռաբեկ դատարանը վերոնշյալ որոշմամբ անհիմն է համարել Դատարանի կողմից «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կիրառման հիմքով «Էկոդար» բնապահպանական հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունման մերժումը: Դատարանի 24.03.2010թ. վճռով մերժվել է Կազմակերպության հայցն այն պատճառաբանությամբ, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, Օրինակի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետը հասարակական կազմակերպությունների չի օժտում դատավարական իրավասուբյեկտությամբ:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի հիման վրա այս անգամ ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է տրամագծորեն հակառակ որոշում՝ վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՄԴՈ-906 որոշումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ դատարան դիմելու իրավունք նախատեսված է միայն այն անձանց համար, ում իրավունքներն անմիջականորեն խախտվել են վիճարկվող ակտով, գործողությամբ կամ անգործությամբ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վիճարկվող դատական ակտը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության կարգավորման նպատակներից:

Մինչդեռ, ՀՀ սահմանադրական դատարանն, իր 2012թ. տարեկան հաղորդմամբ անդրադառնալով Վճռաբեկ դատարանի որոշմանը, վերահաստատել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «... հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կոլեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ նպատակների շրջանակներում է» և արձանագրել, որ «... ՀՀ վարչական դատարանը, նույն կերպ նաև՝ 01.04.2011թ. ՀՀ վճռաբեկ դատարանը, սխալ են մեկնաբանել ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության վերաբերյալ՝ վերջիններիս գրկելով իրենց կանոնադրական նպատակներից բխող հարցերի առնչությամբ դատարան դիմելու իրավունքից»:

## V. Դատական համակարգի օրենսդրական խնդիրներ

Բացի վերոնշյալ համակարգային խնդիրներից, որոնք հիմնականում պայմանավորված են օրենսդրության ոչ պատշաճ կիրառմամբ, առկա են նաև օրենսդրական կարգավորմամբ պայմանաված մի շարք խնդիրներ, որոնք կարող են լուծվել բացառապես իրավական կարգավորումների փոփոխությամբ:

Այսպես, ըստ ՀՀ դատական օրենսգրքի՝ Դատավորի կարգապահական պատասխանատվության հարցը քննելու արդյունքում Արդարադատության խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝ նախազգուշացում, նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 6 ամիս ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, խիստ նկատողություն, որը զուգորդվում է դատավորին 1 տարի ժամկետով աշխատավարձի 25 տոկոսից զրկելով, *դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությամբ Հանրապետության Նախագահին դիմում:*

Եթե Հանրապետության Նախագահը Արդարադատության խորհրդի՝ դատավորի լիազորությունների դադարեցման միջնորդությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, չի դադարեցնում դատավորի լիազորությունները, ապա միջնորդությունը համարվում է մերժված: Այդ դեպքում օրենքի ուժով դատավորը համարվում է համապատասխանաբար ՀՀ դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով կամ 165-րդ հոդվածի 3-րդ կամ 4-րդ մասի 3-րդ կետով նախատեսված կարգապահական տույժի ենթարկված:

Նշված իրավակարգավորմանը զուգահեռ ՀՀ դատական օրենսգրքով սահմանված չեն ՀՀ Նախագահի կողմից դատավորի լիազորությունների դադարեցման կամ Խորհրդի միջնորդության մերժման չափորոշիչները, քննարկման կարգը, դատավորի մասնակցության աստիճանը և ընթացակարգը և նրա իրավունքների այլ երաշխիքները տվյալ փուլում: Այս չափորոշիչներն ու ընթացակարգերը, մեր գնահատմամբ, պետք է հստակորեն սահմանվեն օրենքով:

Խնդրահարույց է նաև վեց ամսով կամ մեկ տարով դատավորի աշխատավարձի 25 տոկոսից զրկելով զուգորդված կարգապահական

տույժերի կիրառումը դատավորների նկատմամբ: Նշված դրույթների վերաբերյալ իրենց մտահոգությունն են արտահայտել նաև մի շարք փաստաբաններ՝ սույն զեկույցի մշակման նպատակով անցկացված հարցազրույցների ընթացքում: Այս խնդիրն արձանագրվել է նաև Արևելյան գործընկերության պետություններում դատական բարեփոխումների աջակցության ԵՄ/ ԵԽ համատեղ ծրագրի շրջանակներում 2011թ. հրապարակված զեկույցում. «Յուրաքանչյուր դեպքում, երբ աշխատավարձի նվազեցումը նախատեսվում է որպես կարգապահական տույժ (ինչը, որպես այդպիսին, չի հակասում Եվրոպական չափորոշիչներին), օրենսդիրը պետք է իրազեկված լինի, որ այն պետություններում և տարածաշրջաններում, որտեղ աշխատավարձը համեմատաբար ավելի ցածր է, նման տույժը կարող է բարձրացնել կոռուպցիայի ռիսկն ու հանգեցնել դատավորից ֆինանսական բեռի տեղափոխմանը կողմի վրա»:

2013թ. հոկտեմբերին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել ՀՀ դատական օրենսգրքում և մի շարք այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերին: Դատական օրենսգրքում նախատեսվող փոփոխությունների հետևանքով բացառվել է նյութական և դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտման հիմքով Վճռաբեկ դատարանի պալատի դատավորին և պալատի նախագահին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, այն դեպքում, երբ կարգապահական պատասխանատվության նշված հիմքերը կիրառելի են մնացել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների նկատմամբ: Մեր գնահատմամբ՝ այս փոփոխությունների հետևանքով առանց բավարար հիմնավորման տարբերակված մոտեցում է դրսևորվում առաջին երկու ատյանների դատարանների և վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ: Միջազգային չափորոշիչների ուսումնասիրությունը վկայում է, որ դատավորների կարգապահական պատասխանատվության համատեքստում տարանջատում բարձրագույն և մյուս դատական ատյանների դատավորների միջև չի իրականացվում, գործածվում է «դատավոր» եզրույթը, որը վերաբերում է պետությունների դատական համակարգի բոլոր դատավորներին՝ անկախ կարգավիճակից: Նախատեսվող փոփոխությունները համահունչ չեն նաև Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի հետ, որը նախատեսում է վճռաբեկ դատարանի դատավորի նկատմամբ միայն նյութական իրավունքի խախտման հիմքով կարգապահական վարույթ հարուցելու հնարավորության բացառումը,

մինչդեռ այս դեպքում բացառվում է նաև կարգապահական պատասխանատվությունը՝ դատավարական օրենքի խախտման հիմքով:

Մենք խնդրահարույց ենք համարել նաև շրջանառության մեջ դրված «Դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված կարգավորումները՝ դատավորի գործունեության գնահատման կարգի և հետևանքների մասով: Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների գործունեության գնահատմանը զուգահեռ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորների գնահատման նախատեսման, գնահատման արդյունքները առավելապես կառուցողական և դատավորի կատարողականությունը բարձրացնելու նպատակով օգտագործելու, ինչպես նաև գնահատման արդյունքների բողոքարկման կարգի բարելավման նպատակով մեր կողմից առաջարկվել է վերանայել դատավորների գործունեության գնահատման կարգն ու մեթոդաբանությունը: Առաջարկվել է նաև նվազեցնել քանակական չափանիշների, այդ թվում, դատական ակտերի կայունության ցուցանիշի հիման վրա դատավորի գործունեության գնահատման չափաբաժինը:

Մեր կողմից առաջարկներ են ներկայացվել նաև դատավորի գործունեությանը միջամտելու հնարավորությունը բացառելու նպատակով դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակեցման ուղղությամբ, քանի որ նախագծում ներառված առանձին հիմքեր իրենց անորոշ և հայեցողական ձևակերպումներով կարող են վտանգել դատավորի անկախությունը գործի քննությունն իրականացնելիս:

ՀՀ արդարադատության խորհրդի գործունեության սույն զեկույցում ներկայացված վերլուծության արդյունքների լույսի ներքո անհրաժեշտ ենք համարում վերանայել նախագծով նախատեսված այն իրավակարգավորումները, որոնք դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառումը պայմանավորում են դատավորի գործունեության գնահատման արդյունքներով՝ հաշվի առնելով նախագծով նախատեսված գնահատման կարգն ու մեխանիզմները: